Azg
ԱԶԳ
14 ՆՈՅԵՄԲԵՐ 2007 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 209 (3861)

Դատարանի որոշումն ընդդեմ Գաֆեսճյանի եւ հօգուտ Հայկական համագումարի



Մինեսոթայի դատարանը մերժել է Ժիրայր Գաֆեսճյանի հայցն ընդդեմ Հայկական համագումարի եւ Հայոց ցեղասպանության թանգարանի: Հիշեցնենք, որ Գաֆեսճյանը պահանջել էր չեղյալ համարել Հայոց ցեղասպանության թանգարանի ծրագրի վերաբերյալ Հայկական համագումարի հետ Գաֆեսճյան հիմնադրամի կնքած դրամաշնորհային պայմանագիրը: Ըստ Հայկական համագումարի տարածած հաղորդագրության, Գաֆեսճյանը ցանկանում էր տիրանալ զգալիորեն արժեւորված անշարժ գույքին: Նշվում է, որ Հայոց ցեղասպանության թանգարան-հուշահամալիրը համապատասխան պայմանագրեր է կնքել ճարտարապետական եւ թանգարանային նախագծման ընկերությունների հետ: Ակնկալվում է, որ թանգարանի բացումը տեղի կունենա 2011-ին:

«Ցեղասպանություն» արտահայտության վերացրումն Աթաթուրքին իրականում է առաջացրել Թուրքիայում

Մեջլիսի փոխնախագահը մեղադրել է թուրքական լեզվի ընկերությանը

«Ազգը» նախորդ համարում, անդրադառնալով Քեմալ Աթաթուրքի ճառերի ժողովածուին, նշել էր, որ Թուրքիայի Հանրապետության հիմնադրի՝ հայերին վերաբերող ելույթում «կոտորած» արտահայտությունը փոխարինվել է «ցեղասպանություն» բառով, ինչը մեծ աղմուկ է բարձրացրել երկրում: Ինչո՞ւ, որովհետեւ երկհատոր այս ժողովածուն 1987-ին հրատարակել է Թուրքիայի ազգային մեծ ժողովը՝ Մեջլիսը, որտեղ կատարված վերոհիշյալ փոփոխությունը նկատվել է 20 տարի հետո միայն:

Թուրքիայի համար միանգամայն անախորժ այս աղմուկին հետեւել են փոխադարձ մեղադրանքները: Մեջլիսի փոխնախագահ, մշակույթի, արվեստի եւ հրատարակչության հանձնաժողովի նախագահ Նեւզաթ Փաֆդիլը հրավիրել է մամուլի ասուլիս, տեղի ունեցածը համարելով թյուրիմացություն, դրա համար մեղադրել է Թուրքական լեզվի ընկերությանը:

Նա, ինչպես նոյեմբերի 13-ի համարում նշում է «Թերջուման» թերթը, մասնավորապես ասել է. «Խնդրո առարկա ժողովածուն 1987-ին կազմել էր Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահի խորհրդական Սեդաթ Թյուզունները: Ժողովածուին հավանություն էր տվել Թուրքական լեզվի ընկերությունը, որից հետո միայն Մեջլիսը դա հրատարակել եւ տարածել է: Եթե դրմ ուսումնասիրելու լինեք վերոհիշյալ ընկերության հաջորդաբար 1984, 1988 եւ 2005-ին հրատարակած թուրքերեն բացատրական բառարանները, ապա կտեսնեք, որ դրանցում արաբական «համատարած կոտորած» բառի համար որպես թուրքական տարբերակ օգտագործվել է «ցեղասպանություն» արտահայտությունը: Հետեւաբար այս ամենի պատասխանատու «կոտորածը» «ցեղասպանություն» բառով փոխարինող Թուրքական լեզվի ընկերությունն է:

Հատկանշական է, որ այս ընկերությունը եւ, ինչպես Թուրքական պատմական ընկերությունը, ստեղծվել էր Քեմալ Աթաթուրքի անմիջական կարգադրությամբ:

Հ.Ղ.

ԱԳՆ խոսնակը դատապարտում է Ադրբեջանի եւս մի քաղաքացի

Երեկ արտգործնախարարությունը տարածել է Վլադիմիր Կարապետյանի հաղորդագրությունը, որ Ադրբեջանի ԱԳՆ խոսնակի մեկնաբանությունները «Լոս Անջելես թայմս» թերթին վարչապետ Սերժ Սարգսյանի տված հարցազրույցի վերաբերյալ «դժվար է որակել որպես մեկնաբանություն»: Ըստ Կարապետյանի, «Ադրբեջանի ԱԳՆ խոսնակը ժառանգել է իր ղեկավարության բարոյական կեցվածքը: Կարծես թե նման ոճը ավանդական է դարձել Ադրբեջանի ԱԳՆ-ում: Թերեւս ավելին սպասել չէր կարելի մի երկրից, որ քաղաքական մակարդակի են բարձրացվել ազգային փոքրամասնությունների եւ նրանց մշակութային ժառանգության նկատմամբ անհանդուրժողականությունն ու կույր ատելությունը: Օրինակները բազմաթիվ են՝ ներառյալ պատերազմի ամենօրյա սպառնալիքները»:

Ցեղասպանության մասին նոր գիրք Ռուսաստանում

Ռոստովի «Կովչեգ» տպարանում հրատարակվել է «Մենք դեռ կենդանի ենք... մենք դեռ ճանապարհին ենք..., չորսամյա պայքար» գիրքը: Հաղորդվում է, որ գրքում հավաքվել են Ցեղասպանությունը տեսած մարդկանց հուշերը: Գրքում տեղ են գտել Նազար Քափիկյանի եւ Գյուլբեկ Գալստյանի հուշերը, որոնք Ցեղասպանության տարիներին չորս տարի անցկացրել են լեռներում մարտնչելով թուրք հրոսակների դեմ: Գիրքը առաջին անգամ հրատարակվել է Փարիզում 1932-ին: 2006-ին Նազար Քափիկյանի հետնորդների ջանքերով գիրքը թարգմանվել էր ռուսերեն եւ հրատարակվել:

Թուրք-քրդական բախումները շարունակվում են

Թուրքական լրատվամիջոցները հաղորդում են, որ նոյեմբերի 13-ին թուրքական զորամիավորումների եւ Քրդստանի բանվորական կուսակցության պարտիզանների միջեւ տեղի ունեցած բախումների հետեւանքով զոհվել է 4, եւ վիրավորվել 9 թուրք զինծառայող: Նշվում է նաեւ, որ թուրքական օդուժը ռմբակոծել է Հյուսիսային Իրաքում գտնվող PKK-ի ճամբարները:

Հայկական կինոյի օրեր Ազգաբադում

Նոյեմբերի 11-ին Ազգաբադում բացվել են հայկական կինոյի օրերը, որոնք նվիրված էին Հայաստանի եւ Թուրքմենստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 15-ամյակին: Միջոցառումը կազմակերպել էր Թուրքմենստանում Հայաստանի դեսպանությունը՝ Թուրքմենստանի մշակույթի եւ հեռուստառադիոհաղորդումների նախարարության մասնակցությամբ: Միջոցառման շրջանակում կցուցադրվեն «Եռանկյունի», «Հարսնացուն հյուսիսից» «Կտոր մը երկինք», «Ընկեր Փանջունի», «Անուշ մայրիկ» եւ «Բարեւ, ես եմ» կինոնկարները:

Երկերեսանի Եվրոմիություն

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին դեմ է արտահայտվում Թուրքիայի՝ ԵՄ անդամակցությանը: Այս մասին հայտնել է Եվրոպական խորհրդարանի սոցիալիստների առաջնորդ Մարտին Շուլցը, Ստրասբուրգում քաղաքական խմբակցությունների ղեկավարների հետ փակ դռների հետեւում Ֆրանսիայի նախագահի հետ կայացած հանդիպումից հետո: Ըստ նրա, Սարկոզին «երկերեսանիություն» է անվանել ժամանակին Անկարային տրված Եվրոմիության անդամակցության խոստումը: «Նա դա համարում է անհնարին, քանի որ, իր կարծիքով, Թուրքիան Եվրոպայի մասը չէ»,- հայտնել է Շուլցը:

ՊԵՏԲՅՈՒՋԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՅԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Սերժ Սարգսյան. «Համագործակցենք եւ բանավիճենք դեղի աղագան միտված խնդիրներում»

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երեկ Ազգային Ժողովի լիագումար նիստում քննարկվում էր 2008 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագիծը: Այդ առնչությամբ ելույթ ունեցավ վարչապետ Սերժ Սարգսյանը: Նրա գնահատմամբ՝ եկող տարվա բյուջեն բավական հավակնոտ է եւ իրագործումն էլ որպես



երկրորդ սերնդի բարեփոխումների ելակետ, ենթադրում է ինչպես եկամտային, այնպես էլ ծախսային մասերի էական աճ: Ամեն դեպքում, ըստ վարչապետի, 2008-ի ՀՀ պետբյուջեն ծառայելու է մի քանի ռազմավարական խնդիրների լուծմանը՝ սոցիալական, ժողովրդագրական եւ բարոյահոգեբանական մթնոլորտի խնդիրների լուծում, կրթական եւ մշավոր ներուժի ընդլայնում, առողջապահական, առողջարանային եւ կազմակերպված հանգստի ոլորտների զարգացում, արդյունաբերության, գյուղատնտեսության եւ շինարարության արդիականացման խնդիրների լուծում, ֆինանսական միջնորդության զարգացում, անվտանգության ժամանակակից եւ արդյունավետ համակարգի ձեւավորում եւ հանրապետական ու տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում:

Ռազմավարական գերակայությունները ներկայացնելով՝ վարչապետն ընդգծեց. «Մեր երկրի զարգացման հիմնական նախադրյալը մեր ժողովրդի հոգեւոր միասնությունն է: Փոխադարձ հարգանքի, համագործակցության եւ վստահության մթնոլորտի ձեւավորումը չափազանց կարեւոր է կառավարության արդյունավետ գործունեության համար»: Միասնության հիմքն էլ սոցիալական բեւեռացման մեղմումն է համարվում, ինչի համար սոցիալական բնագավառի ծախսերի տեսակարար կշիռը եկող տարվա բյուջետային ծախսերի ամբողջ ծավալի 46 տոկոսն է: «Այսինքն՝ մեր բյուջեն ունի հստակ սոցիալական ուղղվածություն», բացատրեց վարչապետը:

Տես էջ 2

ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալը մա՞ս է թափ տալիս Ռուսաստանի վրա

Միացյալ Նահանգները Ռուսաստանի առաջ կդնի Վրաստանի տարածքային ամբողջականությանն աջակցելու հարցը: Վրացական էլեկտրոնային կայքէջերի փոխանցմամբ, Թբիլիսիում երեկ ԱՄՆ դեսպանատանը նման հայտարարություն է արել ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Մեթյու Բրայզան՝ հընթացս Վրաստանի տարբեր քաղաքական գործիչների հետ հանդիպումների:

«Մի շարք երկրների հայտարարություններում (ամենայն հավանականությամբ, Բրայզան նկատի ունի ամենից առաջ եւ վերջում Ռուսաստանին - Ա.Հ.) զգացվում է, որ նրանք ցանկանում են ինչ-որ բան շահել Վրաստանում լարվածության առկայությունից, օրինակ, ցանկանում են ճանաչել Աբխազիայի անկախությունը կամ կոչ են անում սեփականություն ձեռք բերել Աբխազիայում (այս դեպքում ակնհայտորեն խոսքը վերաբերում է Մոսկվայի քաղաքագլուխ Յուրի Լուժկովի հայտարարությանը, թե ժամանակն է ճանաչելու ինչպես Աբխազիայի, այնպես էլ Հարավային Օսիայի անկախությունը): Ես կարծում եմ, որ դրանք վտանգավոր եւ ավելորդ հայտարարություններ են», հայտարարել է Բրայզան:

ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալը նաեւ անդրադարձել է աբխազական տարածքում ռուսական զինուժի հնարավոր տեղաշարժերին, ընդգծելով, որ ոչ հաստատում, ոչ էլ ժխտում է այդ տեղեկությունը: «Մենք միայն կարող ենք այդ հարցերը դնել Ռուսաստանի կառավարության առաջ, որպեսզի ստանանք պատասխաններ եւ, որպեսզի, որա գործընկերները հաստատեն իրենց հավատարմությունը Վրաստանի տարածքային ամբողջականության սկզբունքին»:

Բրայզայի հայտարարության մնացյալ հատվածն ուղղակի ցնցող է. «ԱՄՆ-ը եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարության ընկերների խումբը միահամուռ ընդունում են Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Ոչ ոք չպետք է հարցականի տակ դնի Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Վրաստանը մեծ պատասխանատվություն ունի. ապահովել միջազգային հանրության հետ, անմիջական երկխոսություն հաստատել աբխազական եւ հարավօսական կողմերի հետ՝ խաղաղ լուծումներ գտնելու նպատակով»:

ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալն այնպիսի համառությամբ է կրկնել Վրաստանի տարածքային ամբողջականությանն աջակցելու, այն ընդունելու անբեկանելիությունը, կարծես խոսքը հենց Միացյալ Նահանգների մասին է: Մյուս կողմից, թերեւս շատ յուրօրինակ է, որ Մոսկվայի քաղաքագլխի խոսքերին ի պատասխան Բրայզան ամենայն հանգստությամբ խոսում է աբխազական եւ հարավօսական կողմերի հետ երկխոսություն հաստատելու կարեւորության մասին:

Ամեն դեպքում, վրացական ընդդիմության բարձրացրած «փոքրիկի» պատճառով Վրաստանում հայտնված Մեթյու Բրայզան ընդամենը առիթը բաց չի թողել որոշակի ուղերձներ հասցնելու ռուսաստանյան ղեկավարներին: Պարզապես Վրաստանում ներկայումս տիրող իրավիճակում, մի կողմից՝ նոյեմբերի 7-ին ցուցարարներին եւ հացադուլավորներին ոստիկանների ծեծելու, նաեւ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու PR-ով չզբաղվող հեռուստաընկերությունների փակվելու առնչությամբ մտահոգություն ու քննություն պահանջող, մյուս կողմից՝ ռուսներին, նաեւ աբխազներին եւ օսերին Վրաստանի տարածքային ամբողջականության մասին փաստող ԱՄՆ-ը իսկապես կիրառում է «երկու ձեռքի» քաղաքականություն:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հայ-բուլղարական համագործակցության ներուժն օգտագործված չէ»

Հայաստանի եւ Բուլղարիայի միջեւ ադրանքաբերջանառության ծավալները կազմում են 30 մլն դոլար, սակայն երկու երկրներն էլ արագ զարգացող տնտեսություններ են եւ համագործակցության ողջ ներուժն օգտագործված չէ: Այս մասին Երեւանում տեղի ունեցած՝ Հայաստանի վարչապետ **Սերժ Սարգսյանի** եւ Բուլղարիայի վարչապետ **Սերգեյ Սանիտեւի** համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ նշեց Բուլղարիայի վարչապետը: Նա նաեւ նշեց, որ Բուլղարիան վերջին տարիներին միջին տարեկան 6 տոկոս տնտեսական աճ է արձանագրում, իսկ արտասահմանյան ներդրումներն այդ երկրում կազմել են 4,1 մլրդ դոլար:

Բուլղարիայի վարչապետը հաստատեց, որ իր՝ Հայաստան այցելության հիմնական նպատակը երկու երկրների հարաբերությունների զարգացմանը նոր թափ հաղորդելն է: Նա նաեւ կարեւորեց շուրջ 11 հազար բուլղարահայերի ներդրումը երկրի զարգացման գործում: «Հայերը Բուլղարիա եկան դժվար եւ ողբերգական տարիներին եւ հաջողությամբ ինտեգրվեցին բուլղարական հասարակությանը», նշեց Սերգեյ Սանիտեւը:

Սերժ Սարգսյանը նույնպես մասնանշեց երկու երկրների ադրանքաբերջանառության ծավալների՝ առկա ներուժի համեմատ փոքր լինելը: Նա հայտնեց, որ Հայաստանը Բուլղարիային նավթամթերք է ներմուծում, սակայն կան նաեւ այլ ադրանքներ, որոնք պահանջարկ կունենան Հայաստանում: Միաժամանակ, ըստ Հայաստանի վարչապետի, մեր երկրում արտադրվող ադրանքատեսակներն էլ կարող են պահանջարկ ունենալ Բուլղարիայում: Տեղեկացվեց, որ տնտեսական հարաբերություններին նոր խթան հաղորդելու համար եկող տարի Բուլղարիայում նախատեսվում է հայ-բուլղարական գործարար համաժողով կազմակերպել:

Երկու երկրների հարաբերությունների զարգացման նոր խթան կարող նավթամթերք է ներմուծում, սակայն կան նաեւ այլ ադրանքներ, որոնք պահանջարկ կունենան Հայաստանում: Միաժամանակ, ըստ Հայաստանի վարչապետի, մեր երկրում արտադրվող ադրանքատեսակներն էլ կարող են պահանջարկ ունենալ Բուլղարիայում: Տեղեկացվեց, որ տնտեսական հարաբերություններին նոր խթան հաղորդելու համար եկող տարի Բուլղարիայում նախատեսվում է հայ-բուլղարական գործարար համաժողով կազմակերպել:

Երկու երկրների հարաբերությունների զարգացման նոր խթան կարող է հանդիսանալ այն փաստը, որ 2008-ի հունվարի 1-ից Բուլղարիան դառնալու է Եվրամիության անդամ երկիր: Բուլղարիան նախատեսում է յոտահանչյուր տարի իր համախառն ներքին արդյունքի 0,17 տոկոսը հատկացնել ԵՄ չանդամակցող երկրներին եւ այդ ծրագրի շրջանակներում, ինչպես հավաստիացրեց այդ երկրի վարչապետը, պատրաստ է գումարներ տրամադրել նաեւ Հայաստանին՝ համապատասխան ծրագրերի առկայության պարագայում:

Վարչապետները կարեւորեցին նաեւ մշակութային համագործակցության խորացումը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԺ-ն կդաշտանի՞ բնակիչների շահերը

«**Ազգի**» ընթերցողները քաջատեղյակ են 33-րդ թաղամասի (Խանջյան, Հանրապետության, Ֆիրդուսու փողոցներ, Տիգրան Մեծի պողոտա) օտարման բարդ ու դժվարին գործընթացին: Բազմաթիվ խոստումներ տված ղեկավարները չեն շտապում վերջնականապես լուծել այս թնջուկը եւ 33-րդ թաղամասի բնակիչները գրեթե երկու տարի ֆուն ու դադար չունեն... «**Ազգ**» օրաթերթին օրերս նամակով դիմել էին այդ թաղամասի բնակիչները, պարզելու, թե 18.07.2007-ին Ազգային ժողովի նախագահին հասցեագրված 240 բնակիչների նամակը՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» չարաբաստիկ օրենքում փոփոխություններ մտցնելու առաջարկով, ինչ փուլում է: «**Ազգը**» ՀՀ Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանից տեղեկացավ, որ բնակիչների նամակը 05.11.2007-ին, այսինքն՝ մի քանի օր առաջ հանձնվել է պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի՝ «ննջարկելու համար առաջարկությունների հիման վրա օրենքի նախագիծ մշակելու նպատակահարմարության հարցը»: Հարկ է նշել, որ բնակիչներին նման պատասխան Ազ-ից ուղարկվել է դեռեւս 01.08.2007-ին, երկու ամիս առաջ: «**Ազգը**» իր խոստումին հավատարիմ մնալով հետամուտ է լինելու, թե ինչպիսի՞ պատասխան կլինի պետահրավական հանձնաժողովի փորձագետներից, որոնք առայժմ ուսումնասիրում են փաստաթղթերը եւ մեկ ամսվա ժամկետում պարտավոր են պատասխանել:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սկանդալ ՀՄՀ-Հայաստան շահառուների խորհրդի նիստում

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի նոյեմբերի 2-ի նիստում սկանդալ է տեղի ունեցել: Այս մասին տեղեկացնում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի անդամ Գյումրու «Ասպարեզ» ակումբի նախագահ **Լեւոն Բարսեղյանը**: Նրա գնահատմամբ՝ միջադեպը մտահոգիչ է եւ ոտնահարում է ՇԽ անդամի իրավունքները, խայտառակ նախադեպ է ՀՄՀ-Հայաստան ծրագրի մեկամյա պատմության մեջ: Շահառուների խորհրդի եւ կառավարման խորհուրդ ՇԽ անդամներին որոշես պատվիրակներ ուղարկելու ընտրությանը մասնակցել է այդ իրավունքը չունեցող մեկը՝ Անդրանիկ Հովհաննիսյանը, որը բացի Բնապահպան տնտեսագետների եւ երիտասարդական ՀԿ նախագահ լինելուց, նաեւ քաղաքացիական ծառայող է՝ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետն է, այսինքն՝ հատուկային աշխատակիցը: Ներկայացվածը ընտրակարգի խախտում է, ինչն էլ հիմք ընդունելով՝ Լեւոն Բարսեղյանը ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի նիստի նախագահող Ատոմ Ոսկանյանին առաջարկել է «...անվավեր ճանաչել հոկտեմբերի 12-ի փակ-գաղտնի քվեարկության արդյունքներն ու մոտակա օրերին անցկացնել ՇԽ-ից կառավարման խորհուրդ որոշես պատվիրակ ուղարկվող 5 անդամների ընտրությունների վերավերակություն»: Ու չնայած Լեւոն Բարսեղյանը նախապես հրաժարվել է ԿԽ անցնելու հեռանկարից, այնուամենայնիվ նախագահող Ատոմ Ոսկանյանն առաջարկը քվեարկության չի դնելու:

Ն. Պ.

Հնչակյան կուսակցությունը դատապարտում է ոստիկանության գործողությունները

ՍԴՀԿ-ի կենտրոնական վարչությունը նոյեմբերի 13-ին հանդես է եկել հայտարարությամբ, նշելով, որ նախորդ օրը՝ ժամը 23:30-ի սահմաններում, Երեւանի Կենտրոն համայնքի ոստիկանությունը բերման է ենթարկել կուսակցության «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միության անդամներ Նարեկ Գալստյանին եւ Էդմոնդ Մակարյանին՝ թռուցիկներ փակցնելու համար: Նշելով, որ միության անդամների արարքը չի հակասում ՀՀ սահմանադրությանը, ՍԴՀԿ-ի կենտրոնական վարչությունը խստիվ դատապարտում է ոստիկանության հակաօրինական գործողությունները:

ՕՊԵՐԱՏԻՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Մեղայականով ներկայացավ եւ խոստովանեց

Նոյեմբերի 12-ին, ժամը 16.30-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչություն է ներկայացել Վալերի Բաբայանը եւ հայտնել, որ նոյեմբերի 8-ին Կոմիտասի պողոտայի շուկայի տարածքում ինքն է սպանել որսորդության նախագահ Սայաթ Դավթյանին: Քննությունը վարում է ոստիկանության Արաբկիրի ննջական բաժինը:

Վառերթից մահացավ տեղում

Նոյեմբերի 12-ին ոստիկանության Մասիսի բաժնում ահազանգ է ստացվել, որ ժամը 15.00-ի սահմաններում 1953 թ. ծնվ. Արտակ Հ.-ն, վարելով «Նիսան» մակնիշի ավտոմեքենան, Երեւան-Արտաշատ մայրուղում վառերթի է ենթարկել 1963 թ. ծնվ. Ֆեդրիկ Ներսիսյանին, որը տեղում մահացել է: Մի քանի ժամ անց Արտակ Հ.-ն մեղայականով ներկայացել է բաժին: Կատարվում է նախաքննություն:

Բախում եւ մահ

Նոյեմբերի 12-ին, ժամը 18.30-ի սահմաններում, ոստիկանության Վանաձորի բաժնում ահազանգ է ստացվել, որ 1987 թ. ծնվ. Մարատ Մելքոնյանը, վարելով «Ֆոլկսվագեն» մակնիշի ավտոմեքենան, բախվել է գազատար խողովակին եւ տեղում մահացել: Կատարվում է նախաքննություն:

Մ. ՄԱՐՏԵՍՅԱՆ

Մեր Սարգսյան. «Համագործակցենք եւ բանավիճենք դեղի աղագան միտված խնդիրներում»

1-ին էջից

Կենսաթոշակների բարձրացում առնվազն 60 տոկոսով եւ նոր կենսաթոշակային համակարգի ներդրման զուգորդում, ընտանիքների անապահովվածության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքներում երրորդ եւ հաջորդ երեխան ծնվելու կապակցությամբ յուրաքանչյուր երեխայի համար միանվագ նպաստի չափի 50 տոկոսով (կկազմի 300 հազար դրամ) աճ է նախատեսվում եկող տարի: Ուսուցիչների աշխատավարձերն էլ կբարձրացվեն՝ մեկ դրույքի համար 89.6 հազար դրամ կտրվի: Վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը կկազմի 136 հազար դրամ: Պայմանագրային հետազոտություններ իրականացնող գիտաշխատողների միջին հաշվարկային աշխատավարձը բարձրացվելու է 50 տոկոսով:

Բյուջեի հավակնոտության մի ապացույցն էլ Հայաստանը տարածաշրջանային առողջարանային կենտրոն դարձնելու նպատակն է, որի համար եկող տարի առողջապահության ոլորտի հատկացումները ծախսային մասով աճելու են 24.2 տոկոսով՝ կազմելով 54.6 մլրդ դրամ: Բուժանձնակազմի հաշվարկային միջին աշխատավարձը կբարձրանա 20 տոկոսով: Ըստ վարչապետի, հայ ժողովրդի պատմական եւ մշակութային ժառանգությունը, բնության հարստությունը եւ մեր ավանդական հյուրընկալությունը թույլ են տալիս Հայաստանը դարձնել նաեւ կազմակերպված հանգստի երկիր: 2008-ին մշակույթի, սպորտի եւ տուրիզմի զարգացման համար նախատեսված ծախսերը կկազմեն 14.9 մլրդ դրամ: 1,4 մլրդ դրամ 12 գրադարանների, 20 մշակութային այլ օբյեկտների հիմնանորոգման եւ 24 հուշարձանի վերականգնմանը կտրամադրվի: Այնուհետեւ Սերժ Սարգսյանը տեղեկացրեց խորհրդարանականներին, որ շարունակելու են բարելավել ներդրումային միջավայրը Հայաստանում: «Հարկային համակարգը պետք է լինի մրցունակ: Հարկային բեռը պետք է լինի խելամիտ, իսկ վարչարարության պահանջները՝ բոլոր հարկատուներին հասկանալի», կարծ բանաձեւեց վարչապետը: Ուշադրությունից դուրս չի մնալու նաեւ ենթակառուցվածքների արդիականացման խնդիրը, որի լուծման համար ծախսերի զգալի տեսակարար կշիռ կունենան միջազգային կազմակերպությունների եւ օտարերկրյա պետությունների աջակցությամբ իրականացվելիք ծրագրերը: Պետբյուջեից 16.4 մլրդ դրամ կտրամադրվի 51 ճանապարհների հիմնանորոգման եւ շինարարության ու 33 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգմանը: Նույն ոլորտում 34.8 մլրդ դրամ կնախատեսվի միջազգային կազմակերպությունների եւ օտարերկրյա պետությունների ֆինանսական աջակցության շնորհիվ:

Գյուղատնտեսական ոլորտի ծախսերի աճը կկազմի 10.2 տոկոս՝ բյուջեով նախատեսվում է սուբսիդավորել 80 հազար հեկտարի մշակումը: Բայց կշարունակի խնդիր մնալ ինովացիոն միջավայրի ձեւավորումը: Տարածաշրջանային նշանակություն պետք է փորձեն հաղորդել Հայաստանի ֆինանսական համակարգին՝ հույս է հերշնչում Ստոկհոլմի բորսայի հետ մեր երկրի համագործակցությունը: «Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության» ծրագրին պետական հատկացումները 450 մլն դրամ կկազմեն:

Եկող եւ հաջորդ մի քանի տարիներին, ինչպես փաստեց վարչապետը, անվտանգության ապահովման հիմնական խնդիրը պետական կառավարման մարմինների մասնակցությամբ ազգային անվտանգության համակարգի հետագա կատարելագործումն է լինելու: Եկող տարի պետբյուջեով պաշտպանության, անվտանգության եւ հասարակական կարգի պահպանման ծախսերը կկազմեն շուրջ 170 մլրդ դրամ:

Կառավարման համակարգում էլ կոռուպցիան, սպվերային տնտեսությունը, մրցակցային անհավասար պայմանները, բյուջետային միջոցների փոշիացումը նույնպես դիտարկվում են լուծում պահանջող խնդիրների շարքում, այն էլ բյուջետային հատկացումների շրջանակում: Կառավարման ապարատի պահպանման ծախսերը բյուջեում չեն ավելանա, բայց քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի աճ կարձանագրվի՝ նրանց միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 122 հազար դրամ:

Վարչապետ Սերժ Սարգսյանը նաեւ նկատեց, որ կյանքի բոլոր բնագավառների Երեւանում կենտրոնացվածությունը ակնհայտորեն խոչընդոտում է բոլոր հայաստանաբնակների բարեկեցության մակարդակի բարձրացմանը, հետեւաբար ապակենտրոնացման փորձ է արվելու: «Այս խնդրի լուծման աշխատանքներն իրականացնելու ենք երկու ուղղությամբ. առաջին՝ որոշ ֆունկցիաների դուրսբերում Երեւանից եւ հավասարաչափ բաշխում հանրապետության ամբողջ տարածքով եւ երկրորդ՝ ֆինանսական համահարթեցում եւ դոտացիաների տրամադրում տեղական ինքնակառավարման մարմիններին: 2008-ին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը կավելանա 18.7 տոկոսով՝ կազմելով 21.3 մլրդ դրամ», տեղեկացրեց վարչապետը:

Վերջում Սերժ Սարգսյանը նշեց. «Պետք է այնպես անենք, որ նախընտրական արշավը չխոչընդոտի բյուջեի իրականացմանը եւ գործադիր իշխանության հսկայական աշխատանքին: 2009-2012 թվականների տարեկան բյուջեները ներկայացնելիս կառավարությունը պարտավորվում է մշտապես ձեզ զեկուցել, թե որքանով են տարեկան բյուջեները մեզ մոտեցնում իր մասնանշած ռազմավարական խնդիրների լուծմանը:

Կառավարության պատասխանը մեր ընդդիմախոսներին առաջիկա հինգ տարիներին լինելու է հետեւյալը. առավել նպատակաուղղված աշխատանք, համերաշխության եւ համագործակցության մթնոլորտի ձեւավորում, ներողամտություն, փոխադարձ սեր եւ հարգանք: Եվ վստահեցնում եմ ձեզ, որ մենք ունենք բավարար ներուժ նախանշած ուղուց չշեղվելու համար»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 80 տարի
Գլխավոր եւ հիմնադիր
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Հեռ. 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅՈՒՐԻ ԱՐԵՏԻՔԵՄՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅՈՒՐԻԿԵՄՆ / հեռ. 529221
Հասցեատիրոջին (գրավոր) / հեռ. 582960
Տարբերների սենյակ / հեռ. 581841
Հանձնարարությունների / հեռ. 582483
Ընդունելություն լրահաւաք ծառայության / հեռ. 529353
Հանձնարարչային սարքածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով, կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Հայաստանը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դառնալու ճիշտ ուղու վրա է»

Նշեց Հոլանդիայի Կենտրոնական բանկի եւ Բազելյան կոմիտեի նախագահը

Հայաստանում գտնվող Հոլանդիայի Կենտրոնական բանկի եւ Բազելյան կոմիտեի նախագահ **Նուբ Վելինկը** եւ նրա հայաստանյան գործընկեր, ԿԲ նախագահ **Տիգրան Սարգսյանը** երեկ համատեղ մամուլի ասուլիս էին հրավիրել: Ներկայացնելով հյուրին, Հայաստանի ԿԲ նախագահը թվարկեց այն հանդիպումներն ու միջոցառումները, որ տեղի են ունեցել նրա մասնակցությամբ Հայաստանում: Այնուհետեւ նա ընդգծեց Կենտրոնական բանկում Հոլանդիայի ԿԲ-ի նախագահի հետ քննարկված թեմաները: Դրանք էին Հայաստանը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դարձնելու հայեցակարգը, համաշխարհային տնտեսական վիճակը եւ վառելիքի ու սննդամթերքի թանկացմամբ պայմանավորված գնաճային ճնշումները, միասնական վերահսկողության մարմնի առագայի խնդիրը:

Վերոնշյալից Հայաստանը տարածաշրջանի ֆինանսական կենտրոն դարձնելու առնչությամբ Նուբ Վելինկն այն կարծիքը հայտնեց, որ Հայաստանի ԿԲ-ն ճիշտ ուղու վրա է, բայց անելիքներ այդ ուղղությամբ դեռ շատ կան: Տիգրան Սարգսյանը, պարզաբանելով այդ հայեցակարգը, նշեց, որ ֆինանսական կենտրոն դառնալու համար պետք է մատուցել այնպիսի ծառայություններ եւ առաջարկել այնպիսի որակ, որ մեր երկիրը հրապուրիչ լինի հարեւանների համար: Այն հարցին, թե հնարավո՞ր է տարածաշրջանում կենտրոն լինել Ադրբեջանի հետ հակամարտության եւ Վրաստանի անկայունության պարագայում, Տիգրան Սարգսյանը դրական պատասխանեց, վկայակոչելով Սինգապուրի օրինակը: Վերջինս, երբ ֆինանսական կենտրոն դառնալու հավակնությամբ հանդես եկավ 1965-ին, բազմաթիվ խնդիրներ ուներ Մալայզիայի հետ: Սակայն Սինգապուրի արագ զարգացումը եւ նրա մատուցած ծառայությունները փոփոխեցին իրավիճակը տարածաշրջանում: Այսինքն, սա օգնում է հակամարտությունների կարգավորմանը:

Հայաստանի ԿԲ նախագահի ասածին Հոլանդիայի ԿԲ նախագահն ավելացրեց ֆինանսական զարգացմամբ թռիչք արձանագրած Հոնկոնգի օրինակը, որը հակամարտության մեջ էր Չինաստանի հետ, եւ Իռլանդիայի օրինակը, որը Հյուսիսային Իռլանդիայի պատճառով հակասություններ ուներ Մեծ Բրիտանիայի հետ: Նուբ Վելինկը ավելացրեց, որ կան նպաստավոր գործոններ Հայաստանի տարածաշրջանային ֆինանսական կենտրոն դառնալու համար: Դրանք են՝ 6-7 տարի շարունակվող երկնիշ տնտեսական աճը, չնայած գնաճային մեծ ճնշումներին, ցածր գնաճն ամբողջ տարածաշրջանի համեմատ, պետության ֆինանսական վիճակի վստահելիությունը, անցկացված բարեփոխումները:

Մամուլի ասուլիսի մասնակիցներն անդրադարձան նաեւ «Հայփոստի» հետագա գործունեությանն ու «Փոստբանկի» ստեղծման խնդիրներին: Ըստ Տիգրան Սարգսյանի, «Հայփոստն» այժմ լուրջ մենեջմենթ ունի: Ներկայումս հիմնական աշխատանքները տարվում են կառուցվածքային փոփոխությունների ուղղությամբ: Եկող տարվա սկզբին արդեն փոփոխությունները կերեւան, սակայն դրանք ավելի շոշափելի կլինեն 1 տարի հետո: «Փոստբանկի» եւ «Հայփոստի» հարաբերությունների խնդրին անդրադառնալով, ԿԲ նախագահն ասաց, որ ներկայումս ցանկանում ենք հասկանալ, թե ինչպես է բանկն աշխատելու «Հայփոստի» հետ, ի վիճակի՞ է լինելու վերահսկել «Հայփոստի» ֆինանսական հոսքերը:

Դոլարի նկատմամբ եվրոյի արժեւորման երեւույթի մասին խոսելով, Նուբ Վելինկն այն կարծիքը հայտնեց, որ թեեւ եվրոպայի եւ Հոլանդիայի արտահանողները տուժում են, իսկ ներմուծողները՝ շահում, բայց ընդգծեց, որ ներմուծում-արտահանումը եվրոպայում գրեթե նույն մակարդակի վրա է՝ 1,4 տրիլիոն եվրոյի սահմաններում: «Այս պահին այնքան էլ չենք վախենում եվրոյի արժեւորումից», եզրափակեց Հոլանդիայի ԿԲ նախագահը:

Հայկական դրամի արժեւորման վերաբերյալ էլ Նուբ Վելինկը նշեց, որ իրական փոխարժեքի մակարդակը հասնում է 90-ականների մակարդակին, երբ հայկական դրամը սկսեց թուլանալ, իսկ այժմ սկսել է ուժեղանալ: «Այս պահին ձեր արժույթը, Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատականներով, հավասարակշռված վիճակում է», մատնանշեց նա:

«Որքանով են արդյունավետ ԿԲ գործիքները գնաճային ճնշումները զսպելու համար» հարցին ի պատասխան Տիգրան Սարգսյանը նշեց, որ ԿԲ գործիքներն արդյունավետ են երկարաժամկետ առումով, իսկ երբ լինում են ակնթարթային եւ լուրջ շեղումներ, պետք է կարողանալ գնահատել դրանց ժամկետայնությունը: Գներին բարձրացումը ստեղծել է գնաճային սպասումներ, որոնք չեզոքացնելու համար էլ ԿԲ-ն բարձրացնում է վերաֆինանսավորման տոկոսադրույքները եւ ազդակներ հաղորդում շուկայի մասնակիցներին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այսօր

◆Ժամը 10.00-ին «Կոնգրես» հյուրանոցում կբացվի ԵԱՀԿ-ի եւ «Ինտերնյուսի» համատեղ սեմինարը:
◆Ժամը 11.30-ին կառավարության նիստերի մեծ դահլիճում իր գործունեությունն է սկսում «Արմրոդէքսպո-2007» 7-րդ միջազգային ցուցահանդեսը:
◆Ժամը 12.00-ին «Հայփոստում» տեղի կունենա տնօրենի մամուլի ասուլիսը:
◆Նույն ժամին «Ուրբաթ» ակումբի հյուրը կլինի ԱԺ պատգամավոր, ՀՀԿ խորհրդի անդամ Հակոբ Հակոբյանը:
◆Ժամը 12.00-ին «Փաստարկ» ակումբի հյուրն է խոսքով հարությունյանը:
◆Ժամը 14.00-ին ազգային գրադարանի դահլիճում տեղի կունենա ազգային գրադարանի դրոշի շնորհանդեսը:
◆Նույն ժամին «Ուրբաթ» ակումբում տեղի կունենա հանդիպում «Մարդկության դռները» գեղարվեստական նախագծի հեղինակ Ռաֆֆի Դավթյանի եւ համադրող Սոսաննա Գյուլամիրյանի հետ:
◆Ժամը 14.30-ին ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնում կկայանա մամլո ասուլիս՝ «Հայաստանյան հետազոտական եւ կրթական ցանցերը. ձեռքբերումներ, խնդիրներ եւ լուծումներ» թեմայով:

Մանրամասները նոյեմբերի 24-ին՝ Ախալքալաքում

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 91-րդ նստաշրջանում տեղի են ունեցել նաեւ ՄԱԿ-ի քաղաքական ու քաղաքացիական իրավունքների միջազգային կոնվենցիայի շրջանակներում Վրաստանի ստանձնած պարտավորությունների կատարմանը նվիրված լսումներ: Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը նույնպես մասնակցել է լսումներին, որոնցում ի թիվս մարդու իրավունքների ոլորտին վերաբերող հարցերի, քննարկվել է նաեւ Վրաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ներկայիս վիճակը: Այդ մասին Վրաստանի պաշտոնական պատվիրակության զեկույցի համեմատ ակնհայտ տարբերություններ ունի «Երկիր» միության զեկույցը: Այդ տարբերությունները փաստերով ներկայացվել են նստաշրջանի նախագահությանը, այլ աղացույցների խնդիր չառաջացնելով: Քննարկման ընթացքում «Երկիր» միության հրավերով փորձագետ, Ավստրալիայի Մրդրի համալսարանի պրոֆեսոր Ֆեոնան դը Վառենը ներկայացրել է Վրաստանում հայ փոքրամասնության ներկայիս վիճակի իրողությունները՝ բացառությամբ հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի խնդիրների, որոնք ներկայացրել է միության մասնաճյուղ՝ «Երկիր-Վրաստան» կազմակերպության ներկայացուցիչ Լեւոն Իսախանյանը: ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը «Երկիր» միությանը նաեւ հնարավորություն է ընձեռել նստաշրջանի շրջանակներում իր անունից խնդրո առարկայի առանձին քննարկում կազմակերպելու:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի եզրափակիչ փաստաթղթում որպես կոնվենցիայի մասնակից երկրների հանձնարարական ամրագրվել է.

ա. քննել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքում եւ վարչարարության մեջ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը թույլ տալու հնարավորությունը.

բ. ձեռնարկել բոլոր նպատակահարմար միջոցները փոքրամասնությունների՝ հատկապես հայ եւ ադրբեջանական համայնքների, համարժեք քաղաքական ներկայացվածությունը եւ մասնակցությունն ապահովելու համար: Իշխանությունները պետք է քայլեր ձեռնարկեն լեզվական հիմքի վրա խտրականությունը վերացնելու ուղղությամբ.

գ. էթնիկական փոքրամասնությունների վրացական հասարակությանը համակրման նպատակով երկխոսություն ձեռնարկել փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող շահագրգիռ խմբերի եւ քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ.

դ. հակախտրական միջոցառումների արդյունավետությունը սուգելու նպատակով ընդունել համապատասխան ինդիկատորներ եւ չափորոշիչներ:

ՄԱԿ-ի քաղաքականությունում առաջնային կարեւորություն ունի պետությունների ինքնիշխանության սկզբունքը, եւ, թերեւ, յուրաքանչյուր պետություն հանձնարարականների կատարման շրջանցելու ձեւեր գտնի, սակայն նշված փաստաթուղթը նախադեպ է այլ միջազգային կազմակերպությունների համար եւ, վստահաբար, առաջընթաց քայլ է Վրաստանում ազգային փոքրամասնությունների խնդիրների լուծման գործընթացում: Մանրամասները նոյեմբերի 24-ին «Երկիր» միությունը կներկայացնի Ախալքալաքում կայանալիք ասուլիսում:

ՆԵՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻԺԻ

Բաց նամակ

ՀՀ վարչապետ,
ԱՀՈԾ համակարգող խորհրդի նախագահ
Սերժ Սարգսյանին

Երեւան, 12 նոյեմբերի, 2007 թ.

Հարգելի պարոն Սարգսյան

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտ՝ ՄԻԺԻ հայաստանյան, ոչ կառավարական կազմակերպությունը, որպես քաղաքացիական կառույց, կարեւորելով մեր երկրում աղքատության հաղթահարման խնդիրը, շարունակում է հետեւել եւ իր ներգործուն ազդեցությունն ունենալ ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՈԾ) հետ կապված գործընթացներին: Մենք ցավով արձանագրում ենք, որ հակառակ ԱՀՈԾ-ում (գլուխ 13, կետ 485) նշված ժամկետներին, դեռեւս պատրաստ չէ 2005-2006 թթ. ժամանակահատվածում ԱՀՈԾ իրականացման հաշվետվությունը, ինչպես նաեւ չի ավարտվել ԱՀՈԾ-ի վերանայումը, որն ըստ ծրագրի (գլուխ 13, կետ 485), պետք է վերանայվի երկու տարին մեկ անգամ:

Սակայն առավել մտահոգիչ է այն հանգամանքը, որ վերոնշյալ գործընթացների ձգձգման փաստի եւ դրա պատճառների մասին հանրությունն առ այսօր պատշաճ կերպով չի տեղեկացվել: Կարծում ենք, որ այս դեպքում խախտվել են ծրագրի իրականացման թափանցիկության եւ հաշվետվողականության սկզբունքները:

Հիշեցնենք, որ մենք ԱՀՈԾ-ի 2004-2005 թթ. առաջընթացի հաշվետվության եւ ԱՀՈԾ վերանայման ուշացման վերաբերյալ մեր մտահոգությունն արտահայտել էինք 08.02.06-ի ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին ուղղված նամակում (ներփակ նամակի պատճենը): Մենք 07.03.06-ին ստացել ենք պատասխան նամակ (ներփակ նամակի պատճենը) ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության նախարարի տեղակալ Ս. Ղարայանի կողմից, որտեղ որպես ԱՀՈԾ իրականացման հաշվետվության ձգձգման պատճառ նշվում էր այն հանգամանքը, որ Ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող տնային տնտեսությունների 2004 թվականի արդյունքները հասանելի են եղել միայն 2005 թվականի նոյեմբեր ամսվա վերջին: Անցել է արդեն շուրջ 1.5 տարի, սակայն մինչեւ օրս դեռ չկա ԱՀՈԾ 2005-2006-ի ՀՀ կառավարության հաշվետվությունը:

Ինչ վերաբերում է ԱՀՈԾ վերանայման գործընթացին, ապա վերոնշյալ նամակում նշված էր, որ ԱՀՈԾ վերանայման աշխատանքները նախատեսվում էր ամփոփել 2006 թվականի սեպտեմբեր ամսին: Սակայն կրկին, ԱՀՈԾ-ով նախատեսված վերանայումները մինչեւ օրս չեն կատարվել:

Ուստի խնդրում ենք Ձեր որոշում-պատասխանը վերոնշյալ բարձրացված խնդիրների վերաբերյալ, ինչպես նաեւ Ձեր հստակ պատասխանը հետեւյալ հարցերին.

Ո՞րն է ԱՀՈԾ 2005-2006 թթ. իրականացման ՀՀ կառավարության հաշվետվության ուշացման պատճառն այս անգամ, ե՞րբ է այդ հաշվետվությունը պատրաստ լինելու եւ ներկայացվելու հայ ժողովրդին:

Ինչո՞ւ մինչեւ հիմա չի կատարվել ԱՀՈԾ վերանայման գործընթացը եւ երբ է այն ի կատար ածվելու:

Ինչո՞ւ հանրությունը տեղյակ չի պահվել վերոնշյալ խնդիրների մասին, եւ ի՞նչ է առվելու հետագայում հանրության պատշաճ տեղեկացումն ապահովելու համար:

Վերջում կոչ ենք անում ԱՀՈԾ-ի համակարգող խորհրդին՝ հարգել եւ իրականացնել ծրագրում ամրագրված սկզբունքներն ու համաձայնությունները, քանզի ԱՀՈԾ-ի իրականացումը վերաբերում է մեր հայրենիքի՝ Հայաստանի բնակչության մեծամասնությանը եւ ազգային ու պետական անվտանգության հիմնախնդիր է:

Սույն նամակին կցում ենք նաեւ ՄԻԺԻ-ի ուղերձը՝ աղքատության դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ, պահանջելով բարձրացնել աղքատության գիծը Հայաստանում:

Հարգանքներով եւ Ձեր շուտափույթ պատասխանի ակնկալիքով՝

Մարդու իրավունքների եւ ժողովրդավարության ինստիտուտ՝ ՄԻԺԻ

Կից՝ (ա) ՄԻԺԻ-ի 08.02.06 թվակիր նամակը ՀՀ վարչապետին, (բ) ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս.Ղարայանի 07.03.06 թվակիր պատասխան նամակը ՄԻԺԻ-ին, (գ) ՄԻԺԻ-ի ուղերձը ՀՀ նախագահին, Ազգային Ժողովին, կառավարությանը, հայ ժողովրդին՝ աղքատության գիծը բարձրացնելու պահանջով:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երեւան 0019, Այգեձոր 4/1
Հեռ/Ֆաքս: (374-10) 26-47-12, բջջային: 091-43-21-19
Էլ. փոստ՝ info@idhr.am Կայքէջ՝ www.idhr.am

ԱԶԳ

Դիտարկումներ

Ով է այն տղամարդը-2

Այն, որ մեր ընդդիմադիր դաշտը թույլ է, չկայացած եւ իրենից ներկայացնում է մի շիլաշփոթ, բոլորն են խոսում այդ մասին՝ լրագրողները, վերլուծաբանները, նաեւ հենց իրենք՝ ընդդիմադիր առաջնորդները: Նաեւ իշխանություններին է դա հայտնի, որովհետեւ օգտվում են վիճակից, հաճախ էլ հենց իրենք են ստեղծում նման վիճակներ: Դրանում մենք ավելի ենք համոզվում յուրաքանչյուր համապետական ընտրությունների ժամանակ, երբ բոլորը նույն բանն են ասում, խոսում են միասնաբար իշխանություններին տապալելու անհրաժեշտության մասին, միաժամանակ բոլորն աշխատում են ավելի շատ միմյանց դեմ:

Պետք է արձանագրել մեկ շատ կարեւոր փաստ. հայաստանյան ընդդիմությունն իր կուլմինացիան արտեց 96-ին, երբ կար հզոր շարժում՝ Վազգեն Մանուկյանի գլխավորությամբ: Պետք է խոստովանել, որ 96-ին կոտրվեց ընդդիմության մեջքը եւ մինչ օրս այդպես հաշմանդամ էլ մնում է: Անշուշտ կան օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներ, որոնք խանգարում են ընդդիմության վերակենդանացմանը եւ նոպաստում՝ իշխանությունների շարունակական վերարտադրմանը: Բայց, դարձյալ պետք է շիտակ լինել եւ խոստովանել, որ խանգարող հանգամանքների գերակշիռ մասը սուբյեկտիվ ոլորտից է:

Որեւէ իշխանություն ունի առնվազն 10 տոկոս ռեսուրս: Նաեւ լծակներ, որոնք լրացուցիչ ռեսուրսներ կարող են ապահովել նրանց: Այսինքն, ընտրությունների ժամանակ, եթե անգամ այս կամ այն իշխանությունը ոչ մի աշխատանք չտանի, ձեռքերը ծալած նստի, չունենա եւ ոչ մի համախոհ, միեւնույն է՝ այդ 10 տոկոսը իրենն է: Ինչը չունի ընդդիմությունը, առավել եւս ընդդիմադիր կուսակցությունները՝ առանձին-առանձին վերցրած: Ընդդիմությունը դա կարող է ապահովել Ստեփան Դեմիրճյանի ասած կոնսոլիդացիայի կամ «Այլընտրանքի» 1+1+1+... բանաձեւով: Սակայն, տվյալ դեպքում այդ 1-երը պիտի լինեն ոչ միայն անհատները՝ հանրահավաք գնալով, այլեւ հենց ընդդիմադիր առաջնորդները: Այդ համաբույլից ծնված թեկնածուի շուրջը համախմբվելով միայն կարելի կլինի թվային գերակշռություն ստանալ իշխանության նկատմամբ: Այսինքն՝ իրական միասնական թեկնածու է հարկավոր: Այսինքն՝ վերջ ամբիցիաներին, հետեւաբար նաեւ վերջ իշխանական ռեժիմին:

Այսօր մի տեսակ վարկաբեկվել է նաեւ միասնական թեկնածու հասկացությունը: Բոլոր համապետական ընտրություններից առաջ բոլորը խոսում են միասնական թեկնածուի անհրաժեշտության մասին, հետո՝ ընտրություններին ընդառաջ բոլորը միաբերան սկսում են պնդել, թե միասնական թեկնածու հասկացությունը իշխանությունների կողմից նետված եւ իշխանություններին ձեռնտու տերմին է: Ոչ, սիրելիներ, ճիշտ հակառակն է իրականությունը: Իշխանությունների նետածը հետեւյալն է. «Միասնական թեկնածուն իշխանությունների հորինածն է»: Ահա սա են նետել ու նետում իշխանությունները ամեն անգամ՝ վարկաբեկելով ե՛ւ միասնական թեկնածու հասկացությունը, ե՛ւ զարկ տալով առաջնորդների ամբիցիաներին ու փոշիացնելով ընդդիմադիր էլեկտորատի ձայները: Մեծ ինտելեկտ ու վառ երեւակայություն պետք չէ հասկանալու համար, որ որեւէ իշխանություն Հայաստանում կատարափի այնպիսի թեկնածուից, որը, ով էլ լինի, ներկայացնում է Արտաշես Գեղամյանին ու Արթուր Բաղդասարյանին, Վազգեն Մանուկյանին ու Արամ Կարապետյանին, Ստեփան Դեմիրճյանին ու Արամ Սարգսյանին, Արշակ Սադոյանին ու Շավարշ Քոչարյանին, մի խոսքով ողջ ընդդիմադիր հատվածին միասնաբար, որոնք ամեն օր խոսում են իշխանափոխության անհրաժեշտության մասին: Անգամ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, եթե իհարկե նրա նոպատակները այլ չեն եւ չեն խարխված իր թիմի ռեւանշի գաղափարի վրա: Սա ոչ մի կերպ չեն ուզում հասկանալ հայրենի ընդդիմադիր առաջնորդները, որոնք, իշխանություններին տապալելու անվան տակ, ավելի շատ միմյանց են տապալում՝ կանաչ լույս վառելով իշխանական ռեժիմի վերարտադրության գործընթացի առաջ:

Այդպես է եղել բոլոր համապետական ընտրությունների ժամանակ, եւ որքան էլ ցավալի է, այդպես է լինելու նաեւ առաջիկայում սպասվող նախագահական ընտրություններում, եթե որքան հնարավոր է շուտ չկարողանան հանրագումարի գալ:

Ուրեմն ինչ է հարկավոր: Հասկանալու համար նախ փորձենք պարզել այսօրվա իրավիճակը, քաղաքական դաշտում ովքեր են եղանակ ստեղծում ու փոխում:

Սերժ-Լեւոն հակամարտություն. իմիտացիա՞, թե՞ իրականություն

Լեւոնին Սերժը հատուկ «ռասկրուտկա՞» է անում, թե՞ նա իսկապես որոշել է դուրս գալ Սերժի ու Քոչարյանի դեմ: Այս հարցը բոլորին էր հետաքրքրում, երբ ամիսներ առաջ սկսվեց Տեր-Պետրոսյանի «ռասկրուտկան»: Կարծիք կար, թե իշխանությունները որոշել են Սերժ Սարգսյանին արհեստական այլընտրանք ստեղծել: Այլընտրանք, որը վարկաբեկված է, խոցելի եւ վայելում է մեղմ ասած ժողովրդի անվստահությունը: Նպատակը ցույց տալն էր, թե «ժողովուրդ, տեսեք, եթե Սերժին չընտրեք՝ Լեւոնն ա գալու իր ոճակով»: Ի դեպ, շատերը մինչ օրս էլ շարունակում են պնդել Լեւոնի ակտիվացման այս վարկածը: Ի վերջո այն անհիմն չէ: Վերցնենք թեկուզ այն, որ Լ. Տեր-Պետրոսյանի շրջապատում միչ չեն այն մարդիկ, ովքեր մինչ օրս սնվում են իշխանական կերակրատաշտից: Այդ թվում մարդիկ, ովքեր այսօր ամենաբարձրն են «Լեւոն, Լեւոն» գոռում: Կա երեք տարբերակ.

1. Լեւոնի ակտիվացումը իմիտացիա է,

2. Լեւոնը լուրջ է ընդունել իր հնարավորությունները եւ իսկապես ձգտում է վերադարձնել 97-ին կորցրած իշխանությունը:

Առաջին տարբերակի դեպքում, մենք՝ շարքային քաղաքացիներս, դառնում ենք հերթական կեղտոտ քաղաքական մանիպուլյացիայի զոհը եւ ջուր ենք լցնում իշխանությունների, ավելի ստույգ՝ Սերժ Սարգսյանի ջրաղացին: Երկրորդ դեպքում գործ ունենք քաղաքական ռեւանշի դասական օրինակի հետ, որը ոչ մի աղերս չունի թմբկահարվող ժողովրդի վիճակի եւ մարտահրավերների հետ: Ռեւանշը, որը կարող է լինել առաջին հերթին դրսի օժանդակության հաշվին: Ծանոթ ենք ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Թուրքիայում առաջացած այն ոգեւորությանը, որը հաջորդեց առաջին նախագահի առաջադրման մասին հայտարարությանը: Եվ որքան էլ իր հռետորական ձիրքով ժամուկեսանոց խոհափիլիսոփայական ելույթ ունենա, կրկին մանիպուլյացիայի ենթարկի մեզ բոլորիս, հստակ է, որ նրա ու նրա սակավաթիվ զինակիցների խնդիրը ռեւանշն է՝ ընդդիմադիր դաշտում ստեղծված վակուումի եւ մեր երկրի իրական թշնամիների աջակցության պայմաններում (թուրքական մամուլի արձագանքներին «Ազգը» անդրադարձել է):

Իսկ եթե գործ ունենք երրորդ տարբերակի հետ. Լ. Տեր-Պետրոսյանն իսկապես դարձի է եկել, գիտակցել է ինչպես իր, այնպես էլ ներկա իշխանությունների կատարած հանցագործությունները եւ ուզում է մի լավ բան անել ժողովրդի ու պետության համար, արդա նա չորիցի առաջադրվի, այլ պետք է կանգնի մեկ այլ թեկնածուի կողքին ու տատարի նրան: Անկախ նրանից, թե ով է այդ թեկնածուն՝ Վազգեն Մանուկյանը, Արթուր Բաղդասարյանը, Արտաշես Գեղամյանը, Արամ Կարապետյանը, թե՞ մեկ այլ գործիչ:

Վազգեն Մանուկյան

Միանշանակ ամենափորձառու եւ ամենահավասարակշռված գործիչն է Վազգեն Մանուկյանը: Եղել է «Ղարաբաղ» կոմիտեի առաջնորդը, ՀՀ 1-ին վարչապետը, պաշտպանության 1-ին նախարարը: Մինչ օրս, թերեւս ոչ մեկի մոտ կասկած չի հարուցում, որ 96-ի նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ Վազգեն Մանուկյանը, սակայն բռնի ուժի կիրառմամբ նախագահի պաշտոնին մնաց Լեւոն Տեր-Պետրոսյանը: Մինչ օրս էլ Վազգեն Մանուկյանը վայելում է ինչպես ժողովրդի, այնպես էլ ընդդիմադիր մյուս գործընկերների հարգանքը: Սակայն, անգամ այդ հարգանքի պարագայում, Վազգեն Մանուկյանը կարծես չի կարողանում իր ընդդիմադիր գործընկերների մեջ վերականգնել միանձնյա առաջնորդի երբեմնի դիրքերը: Նրան, գուցե եւ ենթատեքստերով, անընդհատ հասկացնում են, թե գնացքից թռչելու ժամանակներին փոխարինելու են եկել նոր ժամանակներ, որտեղ նոր դեմքերի կարիք է զգացվում:

Հիմա նոր դեմքերի, կամ՝ համեմատաբար նոր դեմքերի մասին:

Ստեփան Դեմիրճյան

Այս գործչի թռիչքներին ու վայրէջքներին շատ լավ ծանոթ ենք: Խարիզմատիկ հոր՝ Կարեն Դեմիրճյանի որդին, սակայն, չկարողացավ 2003-ից իր շուրջ ձեւավորված հսկայական ալիքը առաջնորդել դեպի իշխանափոխություն: Նրա բոլոր ժամանակների ամենալավ բնութագիրը տվել է «Հայկական ժամանակը»: Անդրադառնալով 2004-ի աորիյան հայտնի դեպքերի ժամանակ ազգընտիր պահվածքին, այդ թերթը գրել է. «Ինչպե՞ս է սեփական ընտանիքի հանապազօրյա խնդիրը քաղաքական կատեգորիա դարձած ընդդիմությունը պատրաստվում առաջնորդել սովահար ժողովրդին: Սա նման է այն իրավիճակին, երբ ՀԺԿ առաջնորդը ժողովրդին ուղարկում էր ձների ու ռեցիտեն մահակների տակ երթ անելու, իսկ ինքը շարժում էր բորշչ ուտելու:»

21.04.2004թ. «Հայկական ժամանակ»:

Ամեն ինչ ասված է: Անցանք առաջ:

Արամ Կարապետյան

Երիտասարդ, խելացի, կրթված, առույգ, ժողովրդի ասած «դուխով տղա» ու քաղաքական գործիչ, որը 2002-ի վերջում մտավ քաղաքականություն իբրեւ նախագահի թեկնածու եւ ընդամենը 4 ամսում, համընդհանուր կեղծիքների պայմաններում կարողացավ հասնել 4-րդ ազգընտիրի կարգավիճակին (2003-ի ընտրություններում ձայների թվով նա 4-րդն էր): Նրա ժողովրդականությունն էլ ավելի բարձրացավ գարնանը կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ, երբ կոմպրոմատային արշավ սկսեց ու մերկացրեց ներկա իշխանավորներից շատերին: Սակայն Արամ Կարապետյանն ունի մի շատ կարեւոր թույլ կողմ, որը վանում է ընդդիմադիր գործընկերներին: Դա նրա չափազանց ռուսամետությունն է, որը ամեն անգամ հիշեցնում են եւ մամուլի հրապարակումներով եւ անգամ քաղաքական գործիչների շուրթերով:

Արթուր Բաղդասարյան

Այս գործիչն, անգամ իշխանական հարցումներով, ունի բարձր վարկանիշ: Անգամ ԱԺ նախագահի աթոռից կամովին հրաժարվելուց հետո իշխանական քարոզչամեքենայի հարձակումները, իր եւ ՕԵԿ-ի դեմ կիրառած սեւ տեխնոլոգիաները չնվազեցրին նրա ժողովրդականությունը: Նրա կերպարը ընկալելի է նաեւ դրսում: Նա թերեւս ամենամեծ շանսերն ունի դառնալու միասնական թեկնածու: Սակայն այս դեպքում էլ խնդիր կա: Նրան չեն սիրում ու չեն ընկալում բուն ընդդիմության ներսում: Սա այն դեպքն է, երբ ասում են, թե սերը եւս քաղաքական կատեգորիա է:

Արտաշես Գեղամյան

Սերը քաղաքական կատեգորիա է նաեւ «Ազգային միաբանության» առաջնորդի դեպքում: Ընդդիմության մեջ նրան էլ չեն սիրում, ինչպես Արթուր Բաղդասարյանին, անգամ թաքուն ատելություն են դրսեւորում նաեւ նրա նկատմամբ: Մինչ օրս Գեղամյանին հիշեցնում են 2003-ի նախագահական ընտրությունների 2-րդ փուլը, երբ նա չմիացավ Ստեփան Դեմիրճյանին եւ այլն եւ այլն: Այսինքն այս տարբերակը եւս չի ստացվում:

Ուրեմն ո՞վ է այն տղամարդը, որը կհամախմբի ընդդիմությանն իր շուրջն ու կհաղթի իշխանություններին

Որքան էլ զարմանալի թվա, այդ տղամարդու դերում կարող է լինել որեւէ... կին: Կին քաղաքական գործիչ, որը խելացի է, փորձառու, մաքուր կենսագրությամբ, վայելում է ժողովրդի ու ընդդիմության հարգանքն ու վստահությունը: Իսկ ինչու ոչ: Ինչու մենք չենք կարող ունենալ մեր Մարգարետ Թեչերը կամ Անգելա Մերկելը, Յուլիա Տիմոշենկոն կամ Նինո Բուրջանաձեն:

Թվարկենք մի քանիսի անունները, որոնք կան այսօր քաղաքական քաստերաբեմում: Նրանք իհարկե փոքր են, բայց կան: Հրանուշ Հակոբյան, Հրանուշ Խառատյան, Լյուդմիլա Հարությունյան, Լարիսա Ալավերդյան, Հեղինե Բիւրարյան, Ալվարդ Պետրոսյան եւ այլն: Թվարկվածների մի մասն այսօր իշխանության ներկայացուցիչ է եւ, բնականաբար, միանգամից բացառվում է նրանց տարբերակը: Լյուդմիլա Հարությունյանը չունի քաղաքական բազա, իսկ Հեղինե Բիւրարյանի տարբերակը չի գործի այն նույն պատճառով, ինչ իր ղեկավարի՝ Արթուր Բաղդասարյանի դեպքում:

Նման պայմաններում, կարծում ենք, միասնական թեկնածու դառնալու ամենամեծ շանսերն ունի ԱԺ պատգամավոր, ՀՀ նախկին օմբուդսմեն Լարիսա Ալավերդյանը:

Դրա համար կան բազմաթիվ հիմքեր.

1. Լարիսա Ալավերդյանը ներկայացնում է մի կուսակցություն՝ «Ժառանգությունը», որը գարնանը տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում իրավամբ դարձավ այս խորհրդարանի «կինդեր սյուրպրիզը»: Ժողովուրդը վստահեց Ռաֆֆի Հովհաննիսյանի թիմին, որում իր մեծ ավանդն ուներ նաեւ Լարիսա Ալավերդյանը: (Ի դեպ՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը չի կարող առաջադրվել ՀՀ նախագահի թեկնածու, քանի որ չունի 10 տարվա ՀՀ քաղաքացիություն):

2. Փորձառու է: Մինչ օմբուդսմեն ընտրվելն էլ նա տարիներ շարունակ զբաղվել է հասարակական գործունեությամբ, ծանոթ է ժողովրդի հոգսերին ու խնդիրներին ու բազմիցս բարձրաձայնել է դրանց մասին:

3. Օմբուդսմեն աշխատելու տարիներին նա ավելի է շփվել մեր բնակչության խնդիրներին: Ցուցաբերել է սկզբունքայնություն, իր հնարավորության սահմաններում անհնարին լուծումներ է տվել իրեն եւ իր ղեկավարած գրասենյակին դիմած հազարավոր քաղաքացիների դիմումբողոքներին: Նրա սկզբունքայնության անուրանալի դրսեւորումներից է նաեւ այն, որ նա դուրս եկավ իշխանական ռեժիմի դեմ, դատապարտեց 2004-ի աորիյան բռնությունները, ինչի պատճառով էլ արժանացավ ֆոչայանական ռեժիմի ճնշումներին եւ ի վերջո հեռացվեց իր պաշտոնից:

4. Լարիսա Ալավերդյանը քաջատեղյակ է դարաբաղյան խնդրին: Իրեն փայլուն է դրսեւորել միջազգային այցաններում հայ-ադրբեջանական հակամարտության իրական կողմերը, Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը բարձրաձայնելու եւ հայանպաստ լուծումներ պահանջելու գործում:

5. Վայելում է բարձր հեղինակություն նաեւ միջազգային հեղինակավոր կազմակերպություններում:

6. Կարող է ապահովել կին էլեկտորատի կարեւոր մասի ձայները:

7. Ունի անբիծ կենսագրություն: Դա նշանակում է, որ իշխանական քարոզչամեքենան էլ է պատանձվելու՝ չունենալով ոչինչ նրա դեմ: Դա նշանակում է քաղաքակիրթ պայքար: Դա նշանակում է հաղթանակի իրական հնարավորություններ:

2008-ի փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների նախաշեմին, երբ հաշված օրեր են մնացել ընդդիմությանը կողմնորոշվելու եւ միասնաբար հանդես գալու համար, կարծում ենք, Լարիսա Ալավերդյանի թեկնածությունը լավագույն լուծումը կլինի ազգը կոնսոլիդացնելու, ներկա ռեժիմին գերազանցելու եւ հայաստանում իրական ժողովրդավարություն հաստատելու գործում: Այլապես 2008-ի փետրվարի 20-ին մենք ավելի ենք կոտրվելու՝ արդյունքում բարձրացնելով ոչ միայն հայրենի ընդդիմության, այլեւ՝ ողջ հասարակության հաշմանդամության կարգը:

ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԳ **Միջազգային**

Զավախքում վրաց իշխանությունները նախագծերի մասին տեղեկացնում են «բամբասանքով»

Ուղղիչ աշխատանքային գաղութ-համալիրը՝ պատուհաս

Զավախքում քրեակատարողական որեէ տեսակի հիմնարկ, բանտ, բերդ կամ ուղղիչ աշխատանքային գաղութ կառուցելու տեղեկությունը ներկա դրությամբ վերաբերում է միայն մի վագոնի, որ կանգնեցված է Նինոծմինդայի երջանի Սաղամո լճի ափին գտնվող համանուն գյուղի մոտակայքում: Սկսվող, առավել եւ, այսպես կոչված, ընթացող շինարարության մասին վկայող ոչ մի հանգամանք գոյություն չունի. միչ փորված է սեւահողը, բայց անգամ ոչ մասնագիտական աչքով ակնհայտորեն հասկանալի է, որ շուռումուտ տրված հողաբերքի գոյություն ունեցող մի քանի գծերը բնավ էլ

Սաղամո լիճն ու ափին համանուն գյուղը



Սաղամո լճի հարեւանությամբ այն վայրը, որտեղ նախատեսվում է կառուցել գաղութը

լուրջ շինության հիմք գցելու չեն կարող ծառայել:

Նինոծմինդայի երջանի մի քանի գյուղերում, այդ թվում՝ Սաղամոյում, բնակիչների հետ զրույցների համաձայն, նախապես լուրեր են տարածվել, թե ուղղիչ աշխատանքային գաղութ են ցանկանում կառուցել ոչ թե Սաղամոյի մոտակայքում, այլ Սաթխա գյուղում: Բավականին մեծ գյուղի բնակչությունն արտահայտել է իր անհամաձայնությունը:

Շինարարության հաջորդ «հրապարակ» է նշվել Գարելովկա գյուղը, որի բնակչությունը եւս ընդդիմացել է: Ու թերեւ ուղղիչ աշխատանքային համալիրի կառուցման համար Սաղամոյի ընտրությունը կարելի է բացատրել ամենից առաջ դժգոհության հնարավոր փոքր «ալիքով». Սաղամո լճի ափին մի քանի տուն է կանգնում, եւ գյուղով անցնելիս ավելի շուտ կարելի է կարծել, թե բնակչություն ընդհանրապես չկա:

Բավականին յուրօրինակ է նաեւ, որ այս դեռեւս անփաստաթուղթ նախագծի հեղինակ է հիմնականում նշվում Վրաստանի քրեակատարողական հիմնարկների համապատասխան գերատեսչությունը, որտեղ, սակայն, որեւէ բացատրություն տալու համաձայնություն **«Ազգը»** չստացավ: Մի քանի բաժինների ղեկավարների հետ զրույցներն ավարտվեցին այլոց հեռախոսահամարների տրամադրմամբ, որոնց պատասխանները ոչ մի բանով չէին տարբերվում նախորդներից: Մի խոսքով, տպավորությունն այնպիսին էր, թե կամ խոսելու ցանկություն չկա, կամ չունեն տեղեկություններ:

Ինչեւէ, **«Ազգի»** տեղեկություններով, իսկապես վրաց իշխանությունները ունեն Զավախքում քրեակատարողական հիմնարկ-համալիր կառուցելու ծրագիր: Իսկ թե քանի հոգու համար է նախատեսվում աղմուկ հանած շինությունը եւ ինչ հիմնական գործառույթներ պիտի ունենա, դժվար է ասել, քանի որ դեռեւս պատրաստ չեն անգամ շինության տեխնիկական հիմնավորումն ու նախագիծը: Ամեն ինչ դեռեւս նախագծման փուլում է, ավելին, թեեւ ընդհանրական նշվում է, որ կառուցվելու է մեծ համալիր, բայց դրա վերաբերյալ որեւէ փաստաթուղթ առայժմ կազմված չէ:

Նինոծմինդայի սակրեբուղայի (երջանային օրենսդիր մարմնի) նախագահ **Ստեփան Երանոսյանը «Ազգի»** հարցին, թե գոյություն ունի՞ գոնե հողահատկացման որեւէ որոշում, հաստատեց մեր տեղեկությունները, որ իրավական փաթեթ չկա, առավել եւս չկա տվյալ շինարարության փաստաթղթավորում, չկա անգամ նախագծի հաստատում: «Կովկասյան լուգարողների ցանց»-ի օնլայն հարցազրույցում Երանոսյանը ընդգծեց, որ հողահատկացման համար էլ տեղական սակրեբուղո որեւէ մեկը չի դիմել:

Երանոսյանի տվյալներով, Սաղամո գյուղում ներկա դրությամբ 45 տուն կա, որին դժվար է համաձայնել: Ամեն դեպքում, հիմնականում ստորգետնյա ջրերից սնվող Սաղամո լիճը բավականին յուրօրինակ է ու ավելի շուտ կարող է ծառայել հանգստի գոտու ստեղծման, քան ուղղիչ գաղութ հիմնելու համար: Երանոսյանի այն մոտեցումները, թե ընդունելի է Զավախքի որեւէ այլ հատվածում նմանօրինակ հաստատության կառուցումը, չի կարելի է ընդունել որպես տեղի բնակչության կարծիք:

Ավելի շուտ, Վրաստանի իշխանական կուսակցությունը ներկայացնող Երանոսյանի դեպքում կարելի է դա ընդունելի համարել, քանի որ, ընդհանուր առմամբ, մոտ 38 հազար բնակչություն ունեցող Նինոծմինդայում ընդհանուր թվով առնվազն մինչեւ հազար (որոշ տեղեկություններով, այդպիսի թվաքանակ կունենա աշխատանքային գաղութը անձնակազմի հետ) բանտարկյալի եւ զինված անձնակազմի տեղակայումը չի կարող բարերար ազդեցություն ունենալ առանց այն էլ Վրաստանի կենտրոնական իշխանությունների վարած խաղաքաղաքականությունից հիացմունքի բերկրանք չապրող հայ բնակչության վրա:

Միեւնույն ժամանակ, դատելով գյուղերի դատարկ տների թվաքանակից, 38 հազար բնակչության առկայության առնչությամբ էլ հիմնավորված կասկածներ են առաջանում:

Առավել կարեւոր է, որ նույն այդ թբիլիսյան իշխանությունները բնավ էլ հաշվի չեն նստում տարածաշրջանի բնակչության կարծիքի հետ, քանի որ ցայսօր որեւէ նորմալ ու ամբողջական բացատրություն չի տրվել, ոչ մի մակարդակում չի բացատրվել բնակչությանը, թե ինչ եւ ինչու են պատրաստվում իրականացնել:

Եվ եթե նկատի ունենանք, որ Վրաստանում ազգային փոքրամասնությունների պարփակ բնակության տարածաշրջանները զուտ երջան դիտարկելն ավելի շուտ սխալ է ու ոչ տրամաբանական, ապա ակնհայտ է, որ առանց այն էլ խնդիրներով հագեցած Զավախքում ուղղիչ աշխատանքային գաղութի կառուցումը չի նպաստի առկա իրավիճակի մեղմացմանը:

Ուշադրության արժանի եւս մեկ հանգամանք. նախատեսվող շինարարությունը, ըստ դիրքի, երկաթգծի հարեւանությամբ է տեղակայվելու, այն նույն երկաթգծի, որի վերակառուցումը տխրահռչակ Կարս-Ախալքալաք-Թբիլիսի նախագծի մի մասն է կազմում:

Ընդ որում, եթե ժամանակին մեծապես վթարային երկաթգիծը Թբիլիսին կապում էր Ախալքալաքին, ապա ներկա դրությամբ հասնում է միայն մինչեւ Նինոծմինդա՝ տարվա այս եղանակին գրեթե միակ հնարավորությունը տարածաշրջանի բնակչության կարոտֆիլը մայրաքաղաքի շուկաներ հասցնելու համար:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նինոծմինդա-Երեւան

ՍՊՈՐՏԱՅԻՆՈՒՄ

ԱՄՆ-ը ստեղծում է ուղեծրային ռմբակոծիչներ

Կոնգրեսի հանձնաժողովներից մեկը 100 մլն դոլար է հատկացրել սպառազինությունների տիեզերական նոր համակարգի ստեղծման նպատակով: «Վաշինգտոն փոստ» թերթի տվյալներով, նոր համակարգը կարող է թիրախներ խոցել երկրագնդի ամեն մի կետում: Ֆինանսավորումը կիրականացվի «Թրայդենտ» բալիստիկ հրթիռների ոչ միջուկային գլխամասի եւ օդուժի նոր հարվածային օդանավի մշակմանը հատկացված միջոցների կրճատման հաշվին:

Նոր զենքի նախագծի համաձայն, պետք է ստեղծվի արբանյակ, որից կարձակվի ոչ միջուկային մարտագլխիկով, մոտ 17 հազար կմ հեռավորության գերձայնային հրթիռ:

Մղիչ սարքը հրթիռի արձակումից հետո պետք է երկիր վերադառնա հետագա օգտագործման նպատակով:

Բեն Լադենի խորթ եղբայրը՝ գերձայնային օդանավի առաջին պատվիրատու

«Ալ Ղաիդայի» առաջնորդ Ոսամա բեն Լադենի խորթ եղբայրը՝ սաուդցի գործարար Թարեք բեն Լադենը, ամերիկյան Aerion ընկերության SBY գերձայնային բիզնես-օդանավի առաջին պատվիրատուն է: Նոր օդանավի գինը 80 մլն դոլար է:

Aerion-ի մասնագետներին վկայակոչելով՝ Ռոյթեր գործակալությունը նշում է, որ նոր գերձայնային օդանավը մասամբ կփոխարինի անբահութաբերության պատճառով 2003-ին շահագործումից հանված ֆրանսիական գերձայնային «Կոնկորդին»:

Սպասվում է, որ պատվերների մեծ մասը կստացվի Եվրոպայից եւ Մերձավոր Արեւելից: Ավիաընկերության փոխնախագահ Բրայան Բերենսի խոսքերով, շուկայում նորագույն բիզնես-օդանավի պահանջարկն առկա է: SBY-ն նախատեսված է 8-12 ուղեւորի համար: Կարող է թռչել մի ձայնային, մերձձայնային եւ գերձայնային արագություններով: Առավելագույն արագությունը 1,65 անգամ գերազանցում է ձայնի արագությանը: Թռիչքի հեռավորությունը 7,2 հազար կիլոմետր է:

Իրանի ոստիկանությունը խստությամբ կհետեւի կանանց արտաքին տեսքին

Իրանական թերթերը հրապարակել են այն զանցանքների ցանկը, որոնց դեմ պայքարելու է ոստիկանությունը: Զանցանքների թվում են շպարվելը, գլխաշորի փոխարեն գլխարկ կրելը, ինչպես նաեւ «անկումային» ֆիլմերը, թմրադեղերն ու ալկոհոլը:

BBC-ն արձանագրում է, որ այս տարի Իրանի իշխանությունները վերջին տասնամյակում ամենաակտիվ պայքարն են ծավալել հակաիսլամական վարքագծի ու հագուստի դեմ: Ինչպես պարզվել է, պայքարին օժանդակում է Իրանի հոգեւոր առաջնորդ, այաթոլլահ Ալի Խամենեին:

Ոստիկանությունը նախազգուշացնում է, որ ամենայն խստությամբ կպատժի այն կանանց, որոնք կկրեն կարճ տաբատներ, գերթափանցիկ կամ բացվածքով շրջազգեստներ: Բացի դրանից, օրենքից դուրս կհայտարարվեն «թեթեւսոլիկ» գլխաշորերը, կանայք սիրողված կլինեն ամբողջովին ծածկել մազերը եւ վիզը:

Վերջին կես տարում տասնյակ հազարավոր իրանցի կանայք պատշաճական նախազգուշացում են ստացել կամ նույնիսկ ձերբակալվել են իրենց արտաքին տեսքի պատճառով:

Իրանի բարեփոխիչ ղեկավարների կառավարման ութ տարիներին կանանցից շատերը հրաժարվեցին հագուստի ավանդական մուգ երանգներից, նախընտրելով կարճ տաբատները, նեղ կոստյումները եւ վառ ծաղկավոր գլխաշորերը, բարձրակրունկ կոշիկները, նորաձեւ պայուսակները եւ այլն:

Սակայն նախագահ Մահմոդ Ահմադինեժադի օրոք իրավիճակը փոխվեց: Եվ ոստիկանության վերջին նախաձեռնությունը կոչված է վերականգնելու իսլամական երկրի երբեմնի նկարագիրը: BBC-ն նշում է, որ նման արշավներ անցյալում էլ էին անցկացվել, բայց լրջորեն չէին ընդունվել: Այս անգամ, սակայն, «մեղքի» դեմ պայքարը շարունակելու ոստիկանության կոչը հնչեց անձամբ այաթոլլահ Խամենեի շուրթերից:

Կանանց հագուստի նկատմամբ վերաբերմունքը միշտ էլ Իրանում իշխող քաղաքական տրամադրությունների արտահայտությունն է եղել, նշում են արեւմուտքի վերլուծաբանները:

Ավիաընկերությունների կայքէջերը մոլորեցնում են ուղեւորներին

Եվրոպական ավիաընկերությունների առնվազն 200 կայքէջեր մոլորության մեջ են գցում հավանական ուղեւորներին, պնդում են համապատասխան հետազոտության անցկացրած Եվրոհանձնաժողովի պաշտոնյաները:

Օրինակ, բազմաթիվ կայքէջերը չեն տեղեկացնում հարկերի ու տուրքերի մասին: Սեպտեմբերի վերջերին ԵՄ 15 երկրների ավիաընկերությունների 400 կայքէջերի ստուգումներից պարզվել է, որ դրանց կեսը խախտում է ԵՄ-ում գործող կանոններից գոնե մեկը:

Առավել տարածված խախտումների թվում են գլխավոր կայքէջերում հարկերին ու տուրքերին վերաբերող տվյալների բացակայությունը, իբր անվճար, բայց իրականում վճարովի տոմսերի գովազդումը, ավիատոմսի հետ երբեմն ավելորդ ապահովագրի վաճառքը եւ այլն:

Եվրոհանձնաժողովը նախազգուշացնում էր, որ արդեն եկող տարի որոշ կայքէջեր կփակվեն, եթե իրավիճակը շտկելու արդյունավետ միջոցներ չձեռնարկվեն:

Տվյալ ասպարեզում ամենավատը բելգիական ավիաընկերությունների կայքէջերի վիճակն է. հետազոտված 48 կայքէջերից 46-ը ինչ-որ ձեւով խախտում է սպառողների իրավունքները: Վիճակն առավել բարվոք է Ավստրիայում, որի 20 ավիաընկերություններից ոչ մեկը նման խախտումներ թույլ չի տալիս:

Երախտիքի տուրք արժանավոր մտավորականին

Մկրտիչ Մկրյան-100

Հայաստանի մայր բուհի հիմնադիր դասախոսներ, մեծանուն գիտնականներ Մանուկ Աբեղյանի, Արսեն Տերտերյանի, Հրաչյա Աճառյանի, Գրիգոր Ղափանցյանի, Զաքել Եսայանի եւ շատ այլ անվանի մարդկանց առաջին շրջանավարտներից էր Մկրտիչ Մկրյանը՝ տաղանդավոր գրականագետ ու մանկավարժ, բանասիրական ֆակուլտետի երկարամյա դեկան, ԳԱԱ թղթակից անդամ, բացառիկ նրբաճաշակ գեղագետ ու ուսուցչաքեռ, ինչպես նրան բնութագրեց ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ներկայիս դեկան Արծրուն Ավագյանը: Երեկ ֆակուլտետի դահլիճում սկսվեց երկօրյա գիտական նստաշրջան՝ նվիրված Մկրտիչ Մկրյանի 100-ամյա հոբելյանին:

Ծնունդով վանեցի Մկրտիչ Մկրյանը 1915-ի տարագիր շատ հայերի պես բնօրանի ոսկեծիր, կաղամաշուշ հորիզոնների հետ բերեց նաեւ դառնաղի տպավորություններ: Իր ծննդավայրին վայել առատաշնորհ ունակությունների կրող մտավորական էր նա, լայն հետաքրքրությունների ու մտահորիզոնի տեր անձնավորություն, բազմահմուտ մանկավարժ, որի դպրոցական ու բուհական դասագրքերով կրթվեց մի քանի սերունդ: Գրականագետի իր ըմբռնումները խորն ու մասնաբային էին, ընդգրկող ոչ միայն հայոց բազմադարյա գրականության տարբեր շրջափուլեր, այլեւ համաշխարհային մշակույթի շատ դրսեւորումներ: Ինչպես համալսարանի պրոռեկտոր Մ. Մալխասյանը նշեց. «Մի փիչ Նարեկացի էր, մի փիչ Թումանյան, մի փիչ Շիրվանզադե... Նա սոսկ գրականագետ չէր, այլ մեկը, որ կարողանում էր նրանց վերադրեցնել: Նա ոչ թե զբաղվում էր գրականության պատմության մի շրջանով, այլ սկզբից մինչեւ մեր օրերը, հրաշալի գիտեր նաեւ համաշխարհային գրականություն եւ մշակույթ»:

Ուսուցչի նրա դերը գեղագիտական ճաշակ սերմանելը, ուսանողի միտքն ու հայացքը կրթելն է եղել: Դեկան Արծրուն Ավագյանի եւ պրոռեկտոր Մ. Մալխասյանի բացման խոսքին հետեւեցին գրականագետներ Սամվել Մուրադյանի, Ժենյա Քալանթարյանի եւ Վազգեն Սաֆարյանի գրավոր ելույթները՝ համապատասխանաբար՝ «Մարդը, ուսուցիչը, գրականագետը», «Արսեն Տերտերյան. Մկրտիչ Մկրյան մեթոդական առնչություններ» եւ «Մ. Մկրյանը՝ հայ հին եւ միջնադարյան գրականության տեսաբան» թեմաներով: Դրանցից յուրաքանչյուրը արժեքավոր եւ խորազնին վերլուծումներ էին Մ. Մկրյանի թե՛ մարդկային նկարագրի, թե՛ գիտական գործունեության վերաբերյալ: Վ. Սաֆարյանը նկատեց, որ նրա հմայքը շատ ավելի ակնհայտ էր լսարանում. ինքս ցավում եմ, որ համալսարանական տարիներիս բախտ չեմ ունեցել աշակերտելու նրան: Ժենյա Քալանթարյանի ամփոփ ու տարողունակ, հստակ վերլուծությունը Մկրյանի գրականագիտական մեթոդի ու սկզբունքների մասին ափսոսանքի այդ զգացումիս հաստատումն էր: Գրողի ստեղծագործությունը մեկ ընդհանուր գեղագիտական համակարգի մեջ դիտարկելու մկրյանական մեթոդը բացառիկ արժեքավոր էր դարձնում ուսումնասիրության հատկապես գիտական վերլուծությունը: Շատ կարեւոր էր նաեւ գրողի աշխարհայացքի եւ դավանած գեղագիտության մկրյանական զուգադրում-միակցումը: Գրականագիտական իր դիտարկումները, հոգեբանական մոտեցումները, գրական տեքստերի համեմատական վերլուծումները, հայ հին ու միջնադարյան գրականության, հայկական վերածննդի, մասնավորապես նարեկացիագիտության մեջ բերած նորությունները բազմավաստակ գիտնականի ու հմուտ մանկավարժի նրա կերպարը դարձնում են հիշելի այնքան, որքան հայ գրականությունն ու մեր մշակույթն են:

Գրավոր ելույթներից հետո ցերեկույթը մտերիմ վերհուշի բնույթ կրեց: Մ. Մկրյանի մասին իրենց ուսանողական վերհուշն արեցին գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանը, Լոնդոնից բանաստեղծ Մանվել Ադամյանը, լեզվաբան Սերգեյ Գալստյանը եւ նրա բարեկամ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը-գեղեցիկ, ուսանողական կյանքի հումորախառն դրվագներ: Սերգեյ Գալստյանը պատմում էր, որ գյուղի դպրոցն ավարտելով՝ հայտնվում է համալսարանում ու լսարանում տեսնելով իրենց դպրոցական դասագրքի հեղինակին՝ զարմացած է մնում, հիանում ու մտքով չի էլ անցնում, որ 17 տարի հետո պիտի իր ամենաերկարակյաց տեղակալը լիներ: «Երբ ծիրանին ծաղկում էր, Մկրյանը մի սովորություն ուներ. գնում էր Արգավանդի խճուղու վրայի խորտկարան, կարմիր գինի էր պատվիրում՝ ամենաէժանը, բաժակը պահում ծաղկած ծիրանի ծառի տակ, որ թերթիկները կաթեն գինու մեջ, երբ դրանք չէին ընկնում, մեկին խնդրում էր, որ ճյուղը թափ տա: Հետո էլ իր ընկերներից մեկին հորդորում էր, որ «Հարճի» իր սիրած հատվածն արտասանի: Դրանից հետո ասում էր՝ կյանքս մեկ տարով էլ աղահովվեց...»:

Մկրտիչ Մկրյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովը կշարունակվի նաեւ այսօր, բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության ամբիոններում:

ՄԵԼԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

Ինչպես են ծնվում լեգենդներն ու առասպելները

Գործող հրաբխի եւ ճշմարիտ արվեստագետի միջեւ նմանություն եւ ընդհանրություն փնտրելը բնական է. մշտապես արարման վիճակում, հարատեւ որոնումների ու որոնումների մեջ, ինքնարտահայտման յուրահատուկ ձեւեր գտնելու ճանապարհին կուտակումներն ու ոգեշնչումը մարմնավորելու, կտավին կամ էկրանին, քարին կամ բեմին հանձնելու անբռնազբոս ու խենթ ձգտում՝ սա է արվեստի մարդը, որ ծառայում է մեծ նպատակների: Պարզապես արվեստն արարել կարող է միայն ընտրյալը:

Մինչ մեր զրույցը, թերթում եմ «Ոսկե ծիրան» երեւանյան 4-րդ միջազգային փառատոնի կատալոգը. չեմ բացառում, որ յուրաքանչյուր հրատարակչական օրինակ՝ գիրք թե թերթ, գրքույկ թե բառարան, կարող է ունենալ վրիպակներ, սակայն այս պարագայում վրիպակներն ու սխալները զավեշտի են հասնում, դառնում պարզապես աբսուրդի թատրոն, եթե հաշվի առնենք, որ դրանք թարգմանական անփութության կամ չիմացության արդյունք են: Եվ այսպես, «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ» մրցույթի ժյուրիի նախագահ Վիգեն Չալդրանյանի կենսագրականում կարդում ենք. **he was awarded the Anahit Lifetime achievement award,** որը թարգմանվել է՝ **«նրան շնորհվել է Անահիտ մրցանակը համաշխարհային կինոյում վաստակի համար»**, մինչդեռ իրականում անգլերենից թարգմանաբար միտքը հետեւյալն է՝ **«նա ստացել է «Անահիտ» մրցանակ կյանքում նվաճումների համար»** (իսկ իրական ձեւակերպմամբ՝ **հայ կինոյում մեծ ավանդ ներդնելու համար**), կամ **star** իմաստը բառացիորեն եւ հաղթեղորեն զուգադրվել է **«աստղի»** հետ՝ **«կինոդերասան»** իմաստի փոխարեն: Հետո էլ հարցանում ենք, թե Թարգմանչաց տոն միայն մենք ունենք: Հարցանալ պետք է, երբ կարողանանք մեր նախնիների լավագույն ավանդույթներն արժանավայել շարունակել: Իսկ մենք շարունակենք ներկայացնել մնացյալը: Նույն կենսագրականը ազդարարում է. **«Նա նկարահանել է 50 ֆիլմ»**, սուր աչքն իսկույն կնկատեր անգլերեն եւ հայերեն տարբերակների ցցուն անհամապատասխանությունը. **he has gone on to direct fifteen films** /ընդգծումը - Տ.Ս./ թարգմանաբար՝ **«նա շարունակել է նկարել տասնհինգ ֆիլմ»**: Եթե կինոբեմադրիչ Վիգեն Չալդրանյանն այսօր 50 տարեկան է, ինքն էլ է զարմանում ու տարակուսում, թե ինչպես է հաստատել 50 ֆիլմ նկարել, կինոերկի արարումը ստեղծագործական եւ արտադրական բարդ գործընթաց է, որ երբեմն տարիներ է պահանջում: Վիգեն Չալդրանյանը հումորով նկատում է, որ առնվազն պիտի սկսած լիներ ծնված օրվանից ու ծննդատնից՝ երեւի հաշվի են առել այն հանրահայտ ճշմարտությունը, որ արվեստագետ ծնվում են, այդպես ստացվում է տարեկան երեւի մեկ կինոնկար, իսկ արդյո՞ք ֆիլմի ծնունդը այդքան դյուրին գործընթաց է, մանավանդ մեր երկրում: Սխալ թարգմանության հետեւանքով անանուն թարգմանիչը ակամայից եւ անգիտակցաբար նաեւ էթիկականության շեշտեր է ներմուծել, ասես կինոբեմադրիչը մեր էպոսի հերոսի նման ոչ թե տարով, այլ օրով ու ժամով է հասակ առել, հետո էլ ասում են՝ ինչպես են ծնվում լեգենդն ու առասպելը: Սխալ թարգմանության հետեւանքով էլ արվեստագետը սպիտված է նաեւ հարվածն իր վրա ընդունել՝ հարկադրված լինելով պարզաբանել ճիշտն ու սխալը, անտեղի ու անհիմն մեկնաբանությունները, ասեկոսեները մամուլում եւ տարբեր շրջանակներում՝ «թե տեսեք-տեսեք՝ ինչ ուտճացում, ինչ չափազանցություն»: Եվ այս տարբերակով կենսագրականն արդեն սավառնում է ինտերնետ համացանցում, իրեն սպասել չի տալիս «իսկական» դերին մամուլը եւ շնչակտուր ու չարախնդրեն արձագանքում է թյուր փաստին՝ առանց խորամուխ լինելու երեւույթի էության մեջ:



- **Ես կարոտ եմ ճշմարիտ եւ առողջ ննջադատության, այսօր վերջին ֆիլմիս՝ «Քրմուհու» աղմկահարույց հաղթարշավից անցել է ուղիղ մեկ տարի, եւ չեն դադարում տարաբնույթ ու իրարամերժ արձագանքները, հայտնվում են տրամագծորեն հակադիր հրապարակումներ՝ դիֆերամբներ, հիացական անկեղծ կարծիքներ ու դրանց կողքին անանուն ու վախկոտ պասկվիլներ (քանզի միայն խղճուկ վախկոտն է թիկունքից հարվածում ու թաքնվում), տպավորություն է ստեղծվում, թե վերջիններիս հեղինակները ո՛չ ծննդյան վկայական են ստացել, ո՛չ անձնագիր: Պաշտոնական մամուլի մեկ հրապարակում էլ, մկրտելով ու վերադասավորելով մտքերս, «Քրմուհու» սցենարը կապեց «Սիբիլլա» վեպի էկրանավորման հետ, որն իրականությանը չի համապատասխանում: Բրեխտը մի առիթով ասել է. «Արվեստի ընկալումը միայն այն ժամանակ կարող է իսկական հաճույք պատճառել, երբ գոյություն ունի ընկալման արվեստ»: Ըմբռնելով լրագրողի աշխատանքի ծանրությունը՝ այնուամենայնիվ խորհուրդ եմ տալիս զգուշորեն վերաբերվել բառերին եւ նրբանկատ լինել հարցադրումներում: Բազմաթիվ հարցերից հիշատակեմ մեկը. լրագրողներից մեկը դիմում է ինձ տարօրինակ հարցով՝ *«դուք ձեզ ասծո տեղ եք դրել, որ ասծո դեր եք խաղում»*, ակամայից հիշում ես պոետի խոսքերը՝ «Մի տվեք հիմար հարցեր, որ չստանաք հիմար պատասխաններ», պատմում է կինոբեմադրիչ Վիգեն Չալդրանյանը:**

Իմ այն հարցին, թե ինչ ընթացք կամ հանգուցալուծում ունի «դիվանբաշուն» հատած «Քրմուհու» դատական գործը, նա պատասխանեց.

- **Խնդրում եմ ճիշտ հասկացեք, խոսքը միայն իմ անձին չի վերաբերում՝ եթե ֆիլմը դատը շահի, ուշեմն կշահի մտավորականի արժանապատվությունը, իսկ եթե տանուլ տա, եւս մեկ անգամ կապացուցվի, որ ցանկացած ոնձգություն ստեղծագործող արվեստագետի հանդեպ մնում է անպատիժ, նման նախադեպեր եղել են, ինչը մեզանում նորմ է դարձել: «Իրավունք» թերթի ծոցված հոդվածագրի հիստերիկ վիրավորանքները ուղղված էին ոչ միայն իմ, այլ նաեւ ֆիլմի ամբողջ ստեղծագործական կազմի եւ հանդիսատեսի հասցեին:**

Այս տարի «Քրմուհին» ներկայացվել է ՀՀ Պետական մրցանակի, ինչպես նաեւ ամերիկյան կինոակադեմիայի ամենամյա «Օսկար» մրցանակաբաշխությանը: Ինձ, իբրեւ քաղաքացու եւ լրագրողի, հետաքրքրում է, թե պետական մրցանակի համար ինչու են միաժամանակ մրցում ժանրային առումով միանգամայն տարբեր «քաշայիններ»՝ թատերական ներկայացում, փաստավավերագրական ֆիլմ եւ լիամետրաժ գեղարվեստական կինոնկար: Այս հարցն ուղղում եմ ոլորտի պատասխանատուներին:

Իսկ «Օսկարի» 80-րդ մրցանակաբաշխությանը .«Քրմուհու» մասնակցությունը անհասկանալի պատճառներով չկայացավ, ինչո՞ւ.

- **Երեք ամիս առաջ ՀՀ մշակույթի նախարարության ընտրող հանձնաժողովը Ազգային կինոկենտրոնի առաջարկությամբ, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի գլխավորությամբ ընտրեց «Քրմուհին» այս տարվա «Օսկարի» մրցանակաբաշխությանը ներկայացնելու համար, հայտը ընդունվել է ամերիկյան կինոակադեմիայի կողմից, սակայն համապատասխան փաստաթղթերը ուշացնելու պատճառով (իսկ վերջնաժամկետը այս տարվա հոկտեմբերի 1-ն էր) ֆիլմը դուրս է մնացել մրցույթից: Մշակույթի նախարարությունում հավաստիացնում են, որ ժամանակին ուղարկել են անհրաժեշտ փաստաթղթերը, արդյունքում տեխնիկական վրիպումի պատճառով ֆիլմը չի մասնակցելու մրցույթին: Չեմ ուզում որեւէ կողմին մեղադրել, պարզապես հանելուկային իրավիճակ ստեղծվեց, որի շուրջը որեւէ մեկը չի կարողանում հստակ պատասխան տալ: Մնում է միայն ցավել:**

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՍԱՐԻԵՎԻ

Հ.Գ. Քանի լիցի, օտար լեզվի իմացության ցուցադրական փորձ չէ սա տողերիս հեղինակի կողմից, կամ էլ սրբագրման ինքնակոչ միտում: Պարզապես մտահոգիչ է, որ հաճախ անփութությունից ու անպատասխանատվությունից խախտվում է հասարակական կարգերի ու բարքերի ներդաշնակությունը, նահանջում է սերը, ծնվում են բամբասանք, չարախոսություն: Ու արվեստագետն իր գործով հանգիստ զբաղվելու փոխարեն քանկ ժամանակը պիտի վատնի փուչ ու սին խոսակցությունների վրա: Այնուամենայնիվ, գործող հրաբխի ֆենոմենը շարունակվում է:

ԱԶԳ **Մարզակրթություն**

Ազգային հավաքականի առջեւ աշխարհի առաջնության ուղեգրի նվաճման խնդիր է դրվելու

ՀՖՖ նախագահն ամփոփեց մրցաշրջանի արդյունքները

Ավանդույթի համաձայն, ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության ավարտից հետո ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը հանդիպեց լրագրողներին: Անդրադառնալով ավարտված առաջնության արդյունքներին, նախագահը նշեց, որ ի տարբերություն նախորդ տարիների, այս անգամ մինչեւ վերջ համառ ու լարված պայքար ընթացավ մեդալների համար: Առաջնությունում մինչեւ վերջ պահպանվեց ինտրիգը: Ուրախալի էր նաեւ, որ մյուս թիմերն էլ բավական միավորներ վաստակեցին առաջատարների հետ հանդիպումներում:

Լրագրողների խնդրանքով Ռուբեն Հայրապետյանն իր տեսակետը հայտնեց «Արարատում» ընթացիկ մրցաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ. «Վարուժան Սուքիասյանի գլխավորությամբ «Արարատը» մարտունակ կոլեկտիվ էր դարձել եւ հաջողությամբ պայքարում էր չեմպիոնության համար: Հիմնականում նրա աշխատանքի շնորհիվ թիմի մի քանի ֆուտբոլիստներ հրավիրվեցին ազգային եւ երիտասարդական հավաքականներ: Բայց մրցաշրջանի կեսից ակումբի հովանավորները հերթական ավանտյուրայի դիմեցին, ոչ ֆուտբոլային մտածողություն դրսեւորեցին եւ Սուքիասյանին փոխարինեցին ֆուտբոլից հեռու մի մարզիչով: Նույն հաջողությամբ կարող էին վոլեյբոլի մասնագետ հրավիրել թիմը մարզելու: Իսկ թե ինչ եղավ, բոլորդ տեսաք: Դեռեւս տարիներ առաջ եմ ասել, որ «Արարատի» հովանավորները, ղեկավարությունը չեն ցանկանում, որ Հայաստանում ֆուտբոլը զարգանա, մեծապես ինտրիգներ են սարքում, որոնք ֆուտբոլիստների մեղադրեցին մրցակիցներին խաղեր հանձնելու մեջ: Նրանք փորձում են վարկաբեկել մեր առաջնությունը, մարզչի անորակ լինելու պատճառով թիմի անհաջողությունները բարդում են ֆեդերացիայի, մրցավարների վրա: Նույնքիսի վիճակում էր հայտնվել «Արարատը» նաեւ տարիներ առաջ, երբ կրկին թիմում ինտրիգներ ստեղծեցին ու ի վերջո արարատցիները զրկվեցին առաջնության պարգեւներից»:

Ինչ վերաբերում է հաջորդ մրցաշրջանի հեռանկարներին, ապա նախագահը դժվարացավ առայժմ կոնկրետ որեւէ բան ասել, քանի որ բարձրագույն խմբի ուղեգիր նվաճած «Դինամոն» դեռեւս չի կողմնորոշվել, թե արդյոք կարո՞ղ է ֆինանսական միջոցներ հայթայթել ուժեղագույնների մրցաշարին մասնակցելու համար:

Ռուբեն Հայրապետյանն անդրադարձավ նաեւ մեր հավաքականների մրցելույթներին: Ընդհանուր առմամբ նա գոհ է ազգային հավաքականից: Ուրախալի է, որ վերջապես հավաքականը սկսել է դրսեւորել իր ներուժը, լավ խաղ է ցուցադրում: Դա, ինչ խոսք, հանգուցյալ Իան Պորտերֆիլդի բեղմնավոր աշխատանքի արդյունքն է: Միեւնույն ժամանակ ՀՖՖ նախագահին չի բավարարում հավաքականի ցույց տված արդյունքը: Նա համոզված է, որ առաջընթացը շարունակվելու, նույն նվիրվածությամբ գործելու դեպքում հնարավոր կլինի աշխարհի առաջնության ընտրական առաջիկա մրցաշարում եզրափակիչի ուղեգրի համար պայքարել: Եվ ՀՖՖ նախագահը նման խնդիր է դնելու հավաքականի առջեւ: Այս առնչությամբ չենք կարող մեր ուրախությունը չհայտնել: Երբ ֆուտբոլիստների առջեւ կոնկրետ նպատակ է դրվում ու նրանցից պահանջվում խնդրի իրագործումը, նրանք ավելի մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով են գործում:

Երիտասարդական հավաքականի ելույթներից նախագահը գոհ չէ: Նա նշեց, որ ազգային հավաքականի համար կադրեր պատրաստելու հարցում երիտասարդականը կատարում է իր խնդիրը, իսկ ահա ընտրական մրցաշարում առայժմ անհաջող է հանդես գալիս: Իսկ ահա 19 տարեկանների պատանեկան հավաքականից, որը հաջողությամբ հաղթահարեց ընտրական մրցաշարի առաջին փուլի արգելքը, Ռուբեն Հայրապետյանը գոհ է: Նա գերազանց ելույթի համար շնորհակալություն հայտնեց հավաքականի մարզիչներից ու ֆուտբոլիստներից:

Մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականից նախագահը սպասելիքներ չուներ: Տարիքային այդ խմբի հեռանկարային ֆուտբոլիստների թիվը շատ փոքր է: Սակայն կան 1993-95-ի ծնված մի շարք շնորհալի պատանի ֆուտբոլիստներ, որոնց շնորհիվ մի քանի տարի անց նախագահը նման խնդիր է դնելու հավաքականի առջեւ: Այս առնչությամբ չենք կարող մեր ուրախությունը չհայտնել: Երբ ֆուտբոլիստների առջեւ կոնկրետ նպատակ է դրվում ու նրանցից պահանջվում խնդրի իրագործումը, նրանք ավելի մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով են գործում:

Երիտասարդական հավաքականի ելույթներից նախագահը գոհ չէ: Նա նշեց, որ ազգային հավաքականի համար կադրեր պատրաստելու հարցում երիտասարդականը կատարում է իր խնդիրը, իսկ ահա ընտրական մրցաշարում առայժմ անհաջող է հանդես գալիս: Իսկ ահա 19 տարեկանների պատանեկան հավաքականից, որը հաջողությամբ հաղթահարեց ընտրական մրցաշարի առաջին փուլի արգելքը, Ռուբեն Հայրապետյանը գոհ է: Նա գերազանց ելույթի համար շնորհակալություն հայտնեց հավաքականի մարզիչներից ու ֆուտբոլիստներից:

Մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականից նախագահը սպասելիքներ չուներ: Տարիքային այդ խմբի հեռանկարային ֆուտբոլիստների թիվը շատ փոքր է: Սակայն կան 1993-95-ի ծնված մի շարք շնորհալի պատանի ֆուտբոլիստներ, որոնց շնորհիվ մի քանի տարի անց անբավարար վիճակի ողջ մեղքը վերցրեց իր վրա եւ խոստացավ շտկել դրությունը: Մասնագետներ են հրավիրվել խոտածածկն ամբողջովին փոխելու եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար: Եթե ամեն ինչ բարվոք ընթանա, ապա հաջորդ տարվա սեպտեմբերին մարզադաշտը կներկայանա նոր խոտածածկով: Մտադրություն կա, որ հաջորդ մրցաշրջանից մարզադաշտը տրամադրվի միայն հավաքականների խաղերի անցկացմանը:

Կրկին անդրադառնալով «Հրազդան» մարզադաշտին, Ռուբեն Հայրապետյանը տեղեկացրեց, որ այդ հարցը գտնվում է ՀՀ նախագահի եւ վարչապետի խիստ հսկողության տակ, համապատասխան հանձնարարականներ են տվել մասնագետներին հարցն ուսումնասիրելու եւ վերջնական վճիռ կայացնելու համար: Վերակառուցման համար կպահանջվի 10-20 մլն դոլար:

Ասուլիսի ընթացքում հարց բարձրացվեց, որ ֆեդերացիայի շենքը Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբին տրամադրելու առնչությամբ դատական հայց է ներկայացվել ֆուտբոլի ֆեդերացիայի դեմ: Որքան էլ որ զարմանալի էր, ՀՖՖ նախագահն այդ հայցից տեղյակ չէր: Նա միայն նշեց, որ լինելով ԱԺ պատգամավոր եւ ՀՀԿ-ի խորհրդի անդամ, լավ գիտի գործող օրենքները եւ ոչ մի խախտում էլ թույլ չի տվել: Ֆեդերացիային պատկանող 3000 քառակուսի մետր տարածքից 800 քառակուսի մետրը վարձակալությամբ տրամադրվել է Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբին: Այդ գործարքը շահավետ է ֆեդերացիայի համար (ի դեմ, շենքում արդեն սկսվել են ներքին հարդարման աշխատանքներ): Ռուբեն Հայրապետյանը դատական հայցի ներկայացումը համարեց քաղաքական շահարկումներ եւ հավաստիացրեց, որ նախընտրական շտաբի առկայությունը որեւէ կերպ չի անդրադառնա ֆեդերացիայի աշխատանքի արդյունավետության վրա:

Հերթական ողբերգությունն իտալական ֆուտբոլում

Իտալական ֆուտբոլում կրկին կրքերը բորբոքվել են եւ հերթական ողբերգությունն է տեղի ունեցել: Արեւմտյան քաղաքի մերձակայքում «Լացիոյի» եւ «Յուվենտուսի» ֆանատների բախման ժամանակ ոստիկաններից մեկի ատրճանակի կրակոցով սպանվել էր «Լացիոյի» 26-ամյա երկրպագու Գաբրիելե Սանդրին: Երկու թիմերի ֆանատները պատահաբար էին հանդիպել: «Լացիոյի» երկրպագուները մեկնում էին Միլան՝ «Ինտերի» հետ հանդիպմանը, իսկ «Յուվենտուսի» համակիրներն ուղեւորվում էին Պերուջա:

Ըստ ոստիկանության պետ Վինչենցո Զակոբեի, սպանությունը պատահականության հետեւանք է եղել: Փորձելով կանխել ընդհարումը, ոստիկանը, որի անունը չի հայտնվում, երկու անգամ օդ է կրակել, սակայն փամփուշտներից մեկը դիպել է մետրոյում գտնվող «Լացիոյի» երկրպագուին: Իտալիայի ներքին գործերի նախարար Զուլիանո Ամատոն հայտարարել է, որ հետաքննություն է վարվում, որի արդյունքում բոլոր մեղավորները կպատժվեն:

«Լացիոյի» երկրպագուի մահը ցնցել է հատկապես ֆուտբոլային թիմերի ֆանատներին, որոնք ոստիկանության հետ հավերժահարար տեսնելու նպատակով մի շարք անկարգություններ հրահրեցին: Դրա հետեւանքով Իտալիայի «Ա» սերիայի երեք հանդիպում չկայացավ: Հետաձգվել են «Ինտեր»-«Լացիո», «Ասալանտա»-«Միլան», «Ռոմա»-«Կալյարի» հանդիպումները: Բերգամոյում կայացած խաղն ընդամենը յոթ րոպե տեւեց: «Ասալանտայի» ֆանատների հրահրած անկարգությունների պատճառով խաղն ընդհատվեց: Ոստիկանների հետ բախումներ են տեղի ունեցել նաեւ Միլանի եւ Հռոմի փողոցներում: Հետաքրքրական է, որ տարբեր թիմերի ֆանատներին, որոնք մշտապես միմյանց նկատմամբ թշնամաբար են տրամադրված, այդ ողբերգությունը միավորեց եւ նրանք միասնական պայքարի դուրս եկան: Այս ամենը ստիպել է Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիային անորոշ ժամանակով հետաձգել «Բ» եւ «Գ» սերիայի բոլոր խաղերը:

ՀԱՄԱՍ

Արդյունավետ տուր

Ի տարբերություն նախորդ երկու տուրերի, Մոսկվայում ընթացող Միխայիլ Տալի հուշամրցաշարի 3-րդ տուրը բավական արդյունավետ էր: Միակ ոչ-ոին գրանցվեց Ալեխեեւ-Գելֆանդ պարտիայում:

Ուշադրության կենտրոնում էր մրցաշարի առաջատար Պետեր Լեկոյի մրցավեճը Վլադիմիր Կրամնիկի հետ: Սեւերով խաղացող հունգարացի գրոսմայստերը պարտվեց, ինչը հնարավորություն ընձեռեց Կրամնիկին 2 միավորով դառնալ առաջատարներից մեկը: Նույնքան միավոր են վաստակել նաեւ Մագնուս Կառլսենն ու Շահրիյար Մամեդյարովը: Կառլսենը պարտության մատնեց Յակովենկոյին, Մամեդյարովն առավելության հասավ Իվանչուկի նկատմամբ: Անդրանիկ հաղթանակը տոնեց նաեւ Շիրովը՝ պարտության մատնելով Կամսկուն: Շիրովը Լեկոյի, Ալեխեեւի եւ Գելֆանդի հետ վաստակել է 1,5 միավոր: Չորրորդ տուրում կենտրոնականը առաջատարների՝ Կառլսենի եւ Մամեդյարովի հանդիպումն է: Կրամնիկը սեւերով կմրցի Կամսկու հետ:

HSBC
Ձեր բանկն անկող աշխարհում

ՆՈՐ, ԻՋԵՑՎԱԾ ՍԱԿԱԳՆԵՐ

էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն տեղեկացնում է, որ սկսած 2007թ. նոյեմբերի 1-ից բանկային հաշվի բացման սակագներն իջեցվել են 70%-ով եւ ներկայումս կազմում են.

Անհատների հաշիվ՝	3,000 ՀՀ դրամ
Լրացուցիչ հաշիվ՝	անվճար
Անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց հաշիվ՝	8,000 ՀՀ դրամ
Լրացուցիչ հաշիվ՝	3,000 ՀՀ դրամ

էյչ-էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
Տնօրինություն

Հայաստանի Հանրապետություն
Երեւան 0009
Տերյան 66 փողոց
Հեռ. 37410 51 50 00
Էլ. փոստ. www.hsbc.am

«ՖԼՈՐԵՍ» ԱՇՈՒՐԴԻ ՏՈՒՆ ՍՊԸ-Ն «Ադամանդ» ԵԱՀԲ-ի հարթակում կազմակերպում է **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի** կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը՝

1. Բնակարան, ընդ. մակերեսը 95,7 քմ:

Հասցե՝ ք. Երեւան, Դավթաշեն համայնք, Դավթաշեն 2 թաղամաս, թիվ 10 շենք, 29 բն.:

Մեկնարկային գինը՝ 7040000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով 14.12.2007-ից յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 11.00-17.00, մինչեւ 30.03.2008-ը՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Տեղեկությունների համար դիմել՝ հեռ. 56-31-15, 56-52-28

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ՄԲԾՁԲ - 07/44 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար՝ ՀՀ Արագածոտնի մարզի, ՀՀ կառավարության 06.09.2007թ. թիվ 997-Ա որոշմամբ նախատեսված միջոցների հաշվին իրականացվող կրթական օբյեկտների լոկալ ջեռուցման աշխատանքների, շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների, ինչպես նաեւ շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ-ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Այունցին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12: 00-ն:

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-07/57» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ոստիկանության կարիքների համար բնակարանի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ-ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Ի.Քոչարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10.00-ն:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մեկնարկում է ՀՀ Շիրակի մարզի Գառնահովիտ համայնքի երկաթուղու ստորեւում «Արճավար» ՍՊԸ-ի կողմից Ախուրյան գետի հերկաթուղու վասկի վրա «Հերկաթուղու» Փ.Հ.Կ-ի քարգաղարեցման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական ստրեսակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական ստրեսակի լսումը տեղի կունենա 2007 թ. նոյեմբերի 20-ին, ժամը 16-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

ԿՈՐԵԼ Է

«Քանաքեռավանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կլոր կնիքը: Համարել անվավեր:

2007թ. նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրություն

2007թ. Նոյեմբերի 2-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին ՀՀ ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը, նախագահի տեղակալ Արթուր Ջավադյանը, խորհրդի անդամներ Ամալյա Սարիբեկյանը, Վարդան Մովսիսյանը, Կարինե Մինասյանը, Անդրանիկ Նորեկյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից Նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչեւ Նոյեմբերն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային եւ դրամավարկային հատվածների ցուցանիշների զարգացումների եւ առաջիկա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:

Գնաճ

12-ամսյա գնաճը 2007թ. սեպտեմբերին արձանագրված 2.7% ցուցանիշի դիմաց՝ հոկտեմբերին կազմել է 5.7% (նշենք, որ միայն հոկտեմբերին գնաճը կազմել է 3.1%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ ոստոս 3%)՝ գերազանցելով տարեկան նպատակային 41.5 թիրախը: Գների շեշտակի աճը պայմանավորվել է գերազանցապես արտաքին գործոններով, մասնավորապես՝ միջազգային գների աճի հետեւանքով «հացամթերք» եւ «կենդանական ու բուսական յուղ» ապրանախմբերի գների բարձրացմամբ, որոնք հունիս-հոկտեմբերին աճել են համապատասխանաբար ավելի քան 21%-ով եւ 31%-ով՝ նպաստելով գնաճին 3.1 եւ 1.3 տոկոսային կետով:

Միջազգային գների նման կտրուկ փոփոխությունները դիտվում են որպես արտաքին շոկ, որի ազդեցության չեզոքացումը դրամավարկային կարգավորման մարմինների կողմից մոնետար գործիքներով անհնար է: Սակայն այս պայմաններում առավել կարեւորվում է մոնետար գործոններով պայմանավորված գնաճի կայուն եւ ցածր մակարդակի ապահովումը, որը, եթե բացառենք վերոհիշյալ շոկի ազդեցությունը, հոկտեմբերին նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ կազմել է 1.4%, իսկ դեկտեմբերի նկատմամբ՝ -1.2%:

Միաժամանակ, հարկ է նշել, որ նույն արտաքին շոկերով պայմանավորված, գնաճի կանխատեսումների գերազանցման ռիսկեր են առաջացել ամբողջ աշխարհում (կից հավելվածում ներկայացվում են նախկին ԽՍՀՄ եւ Արեւելյան Եվրոպայի մի շարք երկրներում գնաճի նպատակային թիրախների եւ հոկտեմբերի դրությամբ գրանցված գնաճի համեմատական տվյալները):

Արտաքին միջավայր

Չորրորդ եռամսյակի սկիզբը նշանավորվեց ԱՄՆ դոլարի կանխատեսված արժեզրկմամբ, որը եվրոյի նկատմամբ հասավ իր պատմականորեն առավելագույն մակարդակին՝ գերազանցելով 1.44 ԱՄՆ դոլար եվրոյի դիմաց մակարդակը: Վերջինս հիմնականում պայմանավորված է ԱՄՆ Ֆեդերալ Պահուստային Համակարգի կողմից տոկոսադրույքների նվազեցման հաղթականությամբ, մինչդեռ Եվրոպական Կենտրոնական բանկի կողմից ակնկալվում է, եթե ոչ բարձրացում, ապա առնվազն տոկոսադրույքների պահպանում նույն մակարդակի վրա:

Ինչ վերաբերում է հումքային ապրանքների գներին, ապա դրանք գերազանցեցին կանխատեսումները՝ դրսեւորելով ածի բարձր տեմպեր: Նավթի գները գրանցեցին անվանական իրենց առավելագույն մակարդակները՝ Brent տեսակը Լոնդոնի Միջազգային նավթի բորսայում գերազանցեց բարելի դիմաց 90 ԱՄՆ դոլար, իսկ Light Sweet տեսակը Նյու Յորքի ապրանքահումքային բորսայում՝ 92 ԱՄՆ դոլար մակարդակը: Լոնդոնի մետաղների բորսայում ոսկու գները գերազանցեցին ունցիայի դիմաց 800 ԱՄՆ դոլարը, իսկ պղնձի գները պահպանեցին իրենց բարձր մակարդակը՝ տոննայի դիմաց մոտ 8000 ԱՄՆ դոլար (բոլոր տվյալները վերցված են Bloomberg համակարգից):

Հացահատիկի գները Չիկագոյի ապրանքահումքային բորսայում հոկտեմբերին կայունացան բուշելի դիմաց 9 դոլար մակարդակի շուրջ: Դա կապված էր այն հանգամանքի հետ, որ 2006/2007թ. բերքահավաքի բոլոր վաս լուրերը արդեն հաշվի էին առնվել շուկայի մասնակիցների կողմից եւ նոր պատճառներ գների ածի համար այլեւս չկային:

Բացի վերոնշյալից միջազգային շուկաներում վերջին շրջանում արձանագրված կաթնամթերքների աճը սկսեց արտահայտվել նաեւ Հայաստանում գների աճի վրա, մասնավորապես ներմուծվող կարագի գների բարձրացման միջոցով: Այսպես նորզելանդական կարագի արտահանման գինը միջազգային շուկաներում հոկտեմբերին հասավ տոննայի դիմաց գրեթե 3800 ԱՄՆ դոլարի, մինչդեռ օգոստոսի սկզբին կազմում էր ընդամենը 2880 ԱՄՆ դոլար, որը համապատասխանաբար ազդեց ներքին գների վրա: Նման աճի պատճառը հիմնականում համաշխարհային պահանջարկի աճը եւ Եվրոմիության կողմից կաթնամթերքի սուբսիդիաների վերացումն էր տվյալ ապրանախմբի առումով: Նույն պատկերն է նաեւ բուսական յուղի միջազգային շուկայում, որտեղ եւս տեղի է ունեցել գների էական աճ:

Այսպիսով, ինչպես եւ ակնկալվում էր, արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները էապես ավելացել են եւ նույնիսկ գերազանցել սպասումները:

Համախառն առաջարկ

Տարվա երրորդ եռամսյակում արձանագրվեց տնտեսական աճի բավականին բարձր ցուցանիշ՝ կազմելով 15.4%, որը թեեւ փոքր-ինչ զիջելով կանխատեսված ցուցանիշից, զգալիորեն գերազանցել է նախորդ եռամսյակի ցուցանիշը: Ընդ որում, տնտեսության բոլոր ճյուղերում գրանցվել է ավելացված արժեքի աճ՝ հիմնականում գնելով կանխատեսվածի շրջանակներում:

Տնտեսական աճին առավել մեծ նպաստում են ունեցել շինարարության եւ ծառայությունների ճյուղերը, որտեղ շարունակվել են տարվա առաջին եռամսյակից արձանագրվող միտումները: Այսպես, 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին շինարարությունում արձանագրված ավելացված արժեքի 18.7% աճը առավելապես պայմանավորվել է տրանսպորտի եւ կապի ճյուղերում, ինչպես նաեւ էներգետիկայի ոլորտում ընթացող մեծածավալ ներդրումներով: Ծառայությունների ոլորտում առաջանցիկ տեմպերով շարունակել է ավելանալ տրանսպորտի եւ կապի ծառայությունների ծավալը, որի արդյունքում արձանագրված արժեքի աճի տեմպի արագացման միտումը, որը երրորդ եռամսյակին տ/տ կազմել է 16.6%:

Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, այստեղ շարունակվել են տարվա սկզբից արձանագրվող միտումները: Մասնավորապես, ադամանդագործության ճյուղում շարունակվող զգալի անկման հետ մեկտեղ աճի բարձր տեմպեր են արձանագրվել սննդի (առաջին հերթին՝ կոնյակի, պահածոների եւ հրուշակեղենի արտադրության), մետաղագործական եւ քիմիական արդյունաբերության ենթաճյուղերում: Արդյունքում թեեւ ողջ արդյունաբերական թողարկման ծավալների իրական աճը հունվար-սեպտեմբերին ավելացել է 2.1%-ով, առանց ադամանդագործության այդ ցուցանիշը կազմել է 8.3%: Ընդ որում, միայն երրորդ եռամսյակին արդյունաբերության ավելացված արժեքի աճը տ/տ, գերազանցելով նախորդ եռամսյակի համապատասխան ցուցանիշը, կազմել է 3%:

Գյուղատնտեսությունում տարվա առաջին ինն ամիսներին արձանագրվել է ավելացված արժեքի 8.3% իրական աճ, ընդ որում միայն երրորդ եռամսյակում տ/տ այն կազմել է մոտ 14%: Այն հիմնականում պայմանավորվել է բուսաբուծության արտադրանքի 10% աճով, հիմնականում՝ մրգի եւ բանջարեղենի գծով հարուստ բերքի ստացմամբ:

Համախառն պահանջարկ

2007թ. երրորդ եռամսյակի սպառման եւ ներդրումների փաստացի տվյալները դեռեւս բացակայում են, սակայն արդեն առկա են երկրորդ եռամսյակի փաստացի տվյալները (նշենք, որ մասնավոր սպառման եւ ներդրումների երկրորդ եռամսյակի փաստացի ցուցանիշները հրապարակվել են կանխատեսվածից: Ընդ որում մասնավոր սպառման աճը գերազանցել է կանխատեսված մակարդակը 3.1 տոկոսային կետով եւ կազմել 12.9%, իսկ մասնավոր ներդրումների փաստացի աճը կազմել է 13.6՝ 5.5 տոկոսային կետով ցածր՝ քան կանխատեսվել էր), որի հիման վրա վերանայվել են երրորդ եռամսյակի գնահատականները՝ մասնավոր սպառումը աճի ուղղությամբ, մասնավոր ներդրումները՝ նվազման: Մասնավոր սպառման իրական աճը նախկինում գնահատված 10.3%-ի փոխարեն կկազմի 11.0% (գնահատումները կատարվել են նոր մեթոդաբանությամբ, որի հիմքում ընկած է եկամուտ-սպառում երկարաժամկետ կապի առկայությունը, ըստ որի գնահատվել է երկարաժամկետ կոինտեգրացիոն կապ, այնուհետեւ սխալների ճշգրտման մոդելի միջոցով կանխատեսվել է մասնավոր սպառման դինամիկան), իսկ մասնավոր ներդրումների իրական աճի գնահատականը նվազեցվել է 0.7 տոկոսային կետով եւ կազմել է 17.2%:

2007թ. երրորդ եռամսյակն ավարտվեց ապրանքների եւ ծառայությունների արտահանման դոլարային ծավալների տ/տ 27.5 % աճով (հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով ապրանքային արտահանման (ՖՕԲ) ծավալների աճը կազմել է 22.8%, իսկ առանց ադամանդի՝ 37.2%: Արտահանման ՖՕԲ գների հիման վրա գնահատվել է արտահանման կրեդիտ ցուցանիշը, իսկ ծառայությունների արտահանման ցուցանիշները կանխատեսումներ են): Արտահանման գրանցված աճը պայմանավորվել է արտաքին միջավայրի զարգացումներով, ինչը մասամբ կապված էր արտահանման շուկաներում միջանկյալ սպառման ապրանքների գների տ/տ 14.3% աճի, ինչպես նաեւ արդյունաբերության աճի բարձր տեմպերի պահպանման հետ (առանց ադամանդի): Ապրանքների եւ ծառայությունների իրական ծավալների աճը ընթացիկ եռամսյակում կազմել է 18.5%:

Ապրանքների եւ ծառայությունների ներմուծման (ապրանքային ներմուծման (ՍԻՖ) ծավալների աճը հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով կազմել է 45.7%, իսկ առանց ադամանդի՝ 55.1%: Ներմուծման ՍԻՖ ցուցանիշի հիման վրա գնահատվել է ներմուծման դեբետ ցուցանիշը, իսկ ծառայությունների ներմուծման ցուցանիշները կանխատեսումներ են) տ/տ աճը երրորդ եռամսյակում կազմել է 44.5%, ինչը գրեթե համահունչ է եղել վերջին գնահատականների հետ: Ներմուծման բարձր աճը արտացոլում է տնտեսության պահանջարկի կայուն աճը գրեթե բոլոր ապրանքատեսակների նկատմամբ (սպառողական, հումքային եւ ներդրումային), ինչպես նաեւ փոխարժեքի արժեւորումը: Ներմուծման դոլարային ծավալների աճում դեռեւս արտացոլում են ունեցել նաեւ միջանկյալ սպառման ապրանքների ներմուծման գների տ/տ 16.1% աճը: Անվանական ծավալների նման բարձր աճի պարագայում ապրանքների եւ ծառայությունների իրական ծավալների աճը կազմել է տ/տ 33.0%:

Աշխատանքի շուկա

2007թ. երրորդ եռամսյակում, աշխատանքի շուկայի ցուցանիշները շարունակել են գնաճային ճնշումներ ստեղծել սպառողական շուկայում: Սակայն նշենք, որ եռամսյակի ընթացքում արձանագրվել է աննախադեպ բարձր արտադրողականության աճ՝ 15%, որը էականորեն մեղմել է աշխատանքի շուկայից եկող գնաճային ճնշումները: Տնտեսության միջին անվանական աշխատավարձերի գծով արձանագրվել է 22.3% աճ՝ գնահատված 20.3%-ի դիմաց: Գործազրկության մակարդակը կազմել է 7.1%՝ համընկնելով գնահատականի հետ:

Ոչ առեւտրային բնույթի փոխանցումների ներհոսքի բարձր աճի տեմպերը շարունակում են պահպանվել նաեւ 2007թ. երրորդ եռամսյակում: Դեռ ավելին՝ երրորդ եռամսյակի ընթացքում աճի տեմպերի արագացում է արձանագրվել: Սեպտեմբեր ամսին գրանցվել է ոչ առեւտրային բնույթի դրսից փոխանցումների տ/տ 24.2% նվազում, ի տարբերություն տարեսկզբից գրանցվող միջինում 46% աճի ցուցանիշի: Արդյունքում բանկային համակարգով ստացված ոչ առեւտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքն ավելացել է տ/տ 46.3%-ով, ինչն ավելին է եղել քան նախորդ ամսվա գնահատականները: Դրամական փոխանցումների բարձր աճի տեմպերի պահպանումը կրում է Ռուսաստանի տնտեսական բարձր աճի տեմպերի պահպանման, ինչպես նաեւ տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից Ռուսաստանի տնտեսության համար տրված լավատեսական գնահատականների ազդեցությունը:

Համախմբված բյուջե

2007թ. երրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածը գնաճի վրա ունեցել է փոքր-ինչ՝ 0.6 տոկոս ընդլայնող ազդեցություն, կանխատեսված 1.27 տոկոս ընդլայնող ազդեցության դիմաց: Նշենք, որ շեղումը առաջացել է եկամուտների մասով՝ պայմանավորված մոտ 8.0 մլրդ դրամ եկամուտների գերակատարումներով: Վերջինիս հետեւանքով եկամուտները ունեցել են ավելի մեծ զսպող ազդեցություն, քան կանխատեսված էր, որը սակայն որոշ չափով մեղմվել է փաստացի ՀՆԱ-ի ավելի բարձր ցուցանիշի արձանագրմամբ: Իսկ ծախսերի ազդակը կազմել է ընդլայնող, որը կանխատեսվածի շրջանակներում է:

Նշենք, որ հոկտեմբեր ամսվա պետական հատվածի զարգացումները համահունչ են չորրորդ եռամսյակի կանխատեսումներին, եւ ինչպես նշել ենք եռամսյակի արդյունքում հարկաբյուջետային հաղթականությունը կունենա մոտ 2.3 տոկոս ընդլայնող ազդեցություն: Իսկ տարվա արդյունքում գնաճի վրա ակնկալվում է հարկաբյուջետային հաղթականության մոտ 1 տոկոս ընդլայնող ազդեցություն: Սակայն հարկ է նշել, որ ծախսերի ճշված ծրագրից շեղման եւ խնայողությունների ձեւավորման պարագայում ինչպես չորրորդ եռամսյակում, այնպես էլ տարեկան կտրվածքով ծախսերը կունենան ավելի փոքր ընդլայնող ազդեցություն:

Ամփոփելով նշենք, որ իրական եւ հարկաբյուջետային հատվածներում արձանագրված միտումները հիմնականում համընկել են սույն թվականի հոկտեմբերի 2-ին կատարված կանխատեսումների հիմքում ընկած գնահատականների հետ, եւ արդեն չորրորդ եռամսյակից սկսած մասնավոր ծախսումների առաջանցիկ աճի պայմաններում սպառողական շուկայում գնաճային ճնշումները մեծանալու են:

Փող եւ վարկ

2007թ. երրորդ եռամսյակի դրամավարկային ցուցանիշների 12-ամսյա փաստացի միտումներն էապես չեն տարբերվել նախորդ եռամսյակների միտումներից, ինչը եւ ակնկալվում էր, որը հիմնականում պայմանավորված է եղել տնտեսության դրամայնացման ակտիվ գործընթացով: Այն բարձր տեմպերով շարունակվել է նաեւ հոկտեմբերին, որի արդյունքում արդեն եռամսյակի առաջին ամսվա միտումներով դրամավարկային, եւ հատկապես դրամային ցուցանիշների աճի տեմպերը զգալիորեն գերազանցել են եռամսյակի համար նախատեսված ցուցանիշները: Այսպես, դրամի մեծ պահանջարկին համապատասխան ԿԲ-ն փողի բազան ավելացրել է տ/տ 40.6%-ով, որը, դրամային բազմարկչի 14.1% աճի պարագայում, հանգեցրել է դրամային զանգվածի 60.4% աճի: Վերջինիս կառուցվածքում շարունակել են բարձր տեմպերով աճել ինչպես դրամային ավանդները, այնպես էլ շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը: Հարկ է նշել, որ չնայած հոկտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքի 0.25 տոկոսային կետով բարձրացմանն ու հետագա մեկ տարվա հորիզոնով ավելի զսպողական դրամավարկային հաղթականության սցենարի նախանշմանը, այդուհանդերձ հոկտեմբերին փողի ագրեգատների աճի տեմպերը նախորդ ամսվա համեմատ հիմնականում պահպանվել են, քանի որ փոքր-ինչ արագացել են տնտեսության վարկավորման աճի տեմպերը՝ նախորդ ամսվա 64.6%-ից հասնելով 68.5%-ի:

Արձանագրվեց՝

Վերջին ամիսներին միջազգային շուկայում նավթի, հացահատիկի, կենդանական եւ բուսական յուղերի ակնկալվածից բարձր աճը, չնայած դրամի փոխարժեքի արժեւորմանը, հանգեցրել է ներքին շուկայում բարձր գնաճային միջավայրի ձեւավորման: Նման արտաքին շոկերը գտնվում են դրամավարկային կարգավորման մարմինների ազդեցությունից դուրս՝ կրելով ոչ մոնետար բնույթ, եւ դրանք անհնար է չեզոքացնել: Սակայն, խորհուրդը համակարծիք է, որ կարեւոր է նման շոկերի երկրորդային ազդեցությունների չեզոքացումը, որոնք զուգորդվելով մասնավոր սպառման աճի տեմպերի ավելացմամբ եւ ակնկալվող բյուջետային ծախսերի ընդլայնողական ազդեցությամբ, շարունակելու են պահպանել գնաճային ճնշումները հետագա 12-ամսյա հորիզոնում:

Այս պայմաններում խորհուրդը քննարկեց տոկոսադրույքների բարձրացման եւ զսպողական դրամավարկային հաղթականության իրականացման հնարավոր սցենարները:

Որոշվեց՝

2007թ. Նոյեմբերի 2-ի նիստում ԿԲ խորհուրդը բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքի մակարդակը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5.25%: Ներգրավված դրամային միջոցների եւ լոմբարդային վարկերի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար՝ 2.25% եւ 8.25%:

ԿԲ մամուլի ծառայություն

Գնաճի ցուցանիշներ

Երկրներ	Գնաճի նպատակային ցուցանիշներ	2007թ -ի հոկտեմբերը 2007թ -ի սեպտեմբերի նկ.	2007թ -ի հոկտեմբերը 2006թ -ի հոկտեմբերի նկ.	2007թ -ի հոկտեմբերը 2006թ -ի դեկտեմբերի նկ.
Հայաստան	4 % (±1.5%)	103.1	105.7	103
Ադրբեջան	8%-9%	101,1*	116,4**	111***
Բելառուս	6%-8%	100,9*	109**	105,4***
Վրաստան	7%	102.8	111.2	109.2
Ղազախստան	8.2%-9.3%	104.4	115.3	113.4
Ղրղզստան	5%-6%	103,6*	113,4**	110,3***
Մոլդովա	մինչև 10%	101,6*	114,2**	109***
Ռուսաստան	8%	101.6	110.9	109.3
Տաջիկստան	մինչև 7%	106,3*	116**	112,3***
Ուկրաինա	7.5%	102.9	114.8	111.7
Սլովենիա	3.0%	100.7	105.1	104.2
Սլովակիա	2.0%	100.6	103.3	102.6
Լատվիա	4.4%-6.3%****	102.2	113.2	111.7
Էստոնիա	3.5%-4.2%****	101	108.5	107.3
Չեխիա	3% (±1%)	100.6	104	104.1
Լեհաստան	2.5% (±1%)	103	105.1	105.4

* գնաճի ցուցանիշը ներկայացված է 2007-ի սեպտեմբերը 2007-ի օգոստոսի նկատմամբ

** գնաճի ցուցանիշը ներկայացված է 2007-ի սեպտեմբերը 2006-ի սեպտեմբերի նկատմամբ

*** գնաճի ցուցանիշը ներկայացված է 2007-ի սեպտեմբերը 2006-ի դեկտեմբերի նկատմամբ

**** գնաճի կանխատեսումները ըստ OECD, IMF, European Commission եւ Consensus Economics միջազգային կազմակերպությունների

ՕՐԱԿԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԵՔԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 13.11.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: